

Գևորգ Պողոսյան

Հայ-թուրքական  
հարաբերությունների  
ընկալումը հասարակական  
գիտակցության մեջ

Երևան - 2015

32(47.925)

7-79

h2.

Գևորգ Պողոսյան

Հայ-թուրքական  
հարաբերությունների  
ընկալումը հասարակական  
գիտակցության մեջ

589

Երևան  
 **LHUMI**  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՈՒՄՆԵՐԻ  
2015

Գիրքը երաշխավորված է տպագրության ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդի որոշումով:

Պատասխանատու խմբագիր – փիլ.գիտ.դոկ. Մ.Ա. Հարությունյան  
Գրախոս – փիլ.գիտ.թեկ. Վ.Գ. Օսիպով  
Տեխնիկական խմբագիր – Ն.Ն. Սաֆարյան

*ՆՎՐԿՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍԳԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՍՅԱ ՏԱՐԵԼԻՑԻՆ*

**Պողոսյան Գևորգ**

Պ 797 Հայ-թուրքական հարաբերությունների ընկալումը հասարակա-  
կան գիտակցության մեջ/ Գ. Պողոսյան: ՀՀ ԳԱԱ ՓԻԼՍՈՓՄԱՑՈՒԹՅԱՆ,  
ՍՈՑԻՈԼՈԳԻԱՑԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԲԻ ՐԱՍՏՏՈՒՑՆԵՐ.- Եր.: 2015.- 140 էջ:

Գրքում առաջին անգամ հայերեն լեզվով տպագրվում են հայ-թուր-  
քական համատեղ սոցիոլոգիական հետազոտության արդյունքները և  
դրանց վերլուծությունը: Սոցիոլոգիական հետազոտությունը եզակի է  
իր տեսակով, նախագծվել, մշակվել ու իրականացվել է հայ և թուրք  
սոցիոլոգիական խմբերի համատեղ ջանքերով և առաջմ միակն է եր-  
կու երկրների պատմության մեջ: Այս պատմական սոցիոլոգիական  
հետազոտության առաջին արդյունքները 2005-2006թթ. տպագրվել են  
անգլերեն լեզվով Հայաստանում և Թուրքիայում:

Գիրքը հասցեագրված է քաղաքագետներին, սոցիոլոգներին, հա-  
սարակագետներին, ցեղասպանագետներին, պատմաբաններին, քա-  
ղաքական ու պետական գործիչներին, ինչպես նաև հայ-թուրքական  
հարաբերություններով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակ-  
ներին:

**Ներածություն**  
Հայ-թուրքական համատեղ սոցիոլոգիական ուսումնասիրության  
առաջին փորձը ..... 4

**Գլուխ I. Ի՞նչ «գիտեն մեր հասարակությունները միմյանց մասին**  
§1. Աշխարհագրություն ..... 16  
§2. Քաղաքական համակարգ, կրոն..... 19  
§3. Պատմություն ..... 23  
§4. Արտաքին քաղաքականություն ..... 25

**Գլուխ II. Փոխադարձ վերաբերմունք**  
§1. Վերաբերմունք ..... 30  
§2. Ժողովրդավարության զարգացում ..... 43  
§3. Նախապատվություններ ու ակնկալիքներ ..... 57  
**Վերջաբան** ..... 63

**Հավելված 1. Աղյուսակներ**..... 72  
**Հավելված 2. Հարցաթերթ – Հայաստան** ..... 84  
**Հավելված 3. Հարցաթերթ – Թուրքիա** ..... 110

**Հայ-թուրքական համատեղ սոցիոլոգիական ուսումնասիրության առաջին փորձը**

Հայոց ցեղասպանության հարցը հարյուր տարի շարունակ լուրջ քննարկման առարկա է դարձել միջազգային ամենաբարձր ատյաններում և երկրների պաշտամենտներում: Պատմաբանների ու քաղաքական գործիչների մոտ արդեն շատ վաղուց ձևավորվել են հստակ մտայնումներ և ըմբռումներ այս հարցի շուրջ: Վերջին տարիներին ու հատկապես Ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախօրեին առավել կարևորվում են հայ-թուրքական հասարակական փոխադարձ ընկալումների ուսումնասիրությունը, ժամանակակից հայերի և թուրքերի միջև հարաբերությունների, «հայկական հարցի» քննարկումները տարբեր քաղաքական ու հասարակական հարթակներում՝ այդ թվում էվրոպական երկրներում և ԱՄՆ-ում: Այս աճող միջազգային ուշադրությունը դրդեց մեզ սոցիոլոգիական հարցում իրականացնել Թուրքիայում և Հայաստանում՝ նվիրված հայ-թուրքական հարաբերությունների արդի վիճակին:

Սակայն լայն հասարակական գանգվածների ընկալումներն ու հասարակական գիտակցության դիրքորոշումը պատմական այս կնճռոտ հարցի հանդեպ մնում էր թերուսումնասիրված ու անբավարար լուսաբանված:

Ինչպիսի՞ տեղեկացվածություն կա ժամանակակից թուրք հասարակության շրջանում Հայոց ցեղասպանության մասին, ի՞նչ պատկերացումներ ունեն մերօրյա թուրքերն ու հայերը միմյանց նկատմամբ և ինչպիսի՞ն են տեսնում հայ-թուրքական պետական ու քաղաքացիական հատվածների զարգացման հեռանկարները: Այս և բազմաթիվ այլ հարցերի պատասխանները ստանալու համար անհրաժեշտ էր սոցիոլոգիական ուսումնասիրություն անցկացնել Հայաստանում և Թուրքիայում: Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում դա բավականին բարդ

խնդիր էր հանդիսանում: Մինչ այդ Հայաստանի և Թուրքիայի գիտնականների միջև, մասնավորապես սոցիոլոգների, հանդիպումներ եղել են: Եղել էին նաև տարբեր տարածաշրջանային և հատկապես սևծովյան համագործակցության շրջանակներում իրականացվող գիտական ծրագրերում մասնակցություն ու համագործակցություն: Սակայն հենց հայ-թուրքական հարաբերություններին նվիրված համատեղ ուսումնասիրություն՝ այն էլ Հայոց ցեղասպանության հարցը շոշափող, երբեք նախկինում չէր եղել: Եվ ահա առաջին անգամ մեր պատմության մեջ հայ և թուրք սոցիոլոգները որոշեցին նման ուսումնասիրություն իրականացնել: Բանակցությունները հայ և թուրք սոցիոլոգների միջև սկսվեցին դեռ 2001թ.-ին: Հայաստանից քննարկումների մասնակցում էին Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի մասնագետները, իսկ Թուրքիայի կողմից՝ Չեսոպոտամյան և խորհրդատվական կենտրոնի (SAM) ղեկավար՝ դոկտոր Ֆերիատ Քենտեղը և նրա աշխատակիցները: Թուրքական կողմը, որպես գիտահետազոտական խմբի խորհրդատու, նախատեսել էր հրավիրել Ստամբուլում լույս տեսնող «Ազոս» թերթի խմբագիր Չրանտ Դինքին: Նախնական քննարկումների արդյունքում որոշվել էր լայնածավալ հետազոտական ծրագրի մշակել, որն ընդգրկելու էր մի քանի փուլով ուսումնասիրություններ Հայաստանում և Թուրքիայում՝ նախատեսելով Ստամբուլի մեծաթիվ հայ համայնքի շրջանում հարցումների անցկացում և խմբային քննարկումների (focus group discussion) կազմակերպում, ինչպես նաև հետազոտող գիտական խմբերի փոխացելություններ ու մի շարք կլոր սեղանների և գիտաժողովների անցկացում: Այս լայն ծրագրի իրականացման համար, սակայն, անհրաժեշտ միջոցներ չգտնվեցին կողմերից ոչ մեկի մոտ: Բացի այդ, երկու կողմն էլ քաջ գիտակցում էր, որ իրենց երկրներում լուրջ քննադատության թիրախ կարող են դառնալ: Այն ժամանակ, երբ մենք Ստամբուլից ժամանած երկու թուրք սոցիոլոգների հետ քննարկում էինք համատեղ ուսումնասիրություն անցկացնելու գիտական, մեթոդաբանական ու տեխնիկական մանրամասները, դեռ չէինք պատկերացնում, թե ինչպիսի



քաղաքական բարդությունների առջև կկանգնենք: Թե՛ Հայաստանում, և թե՛ Թուրքիայում գտնվեցին մարդիկ, ովքեր փորձեցին խոչընդոտել մեր հետազոտության իրականացումը: Երբ դեռ ծրագրի գիտական քննարկումներն էին ընթանում, Թուրքիայի ազգայնամական խմբերը խիստ քննադատության ենթարկեցին Ֆ.Քեևտեյի ղեկավարած կենտրոնը հայ-թուրքական բարդ հարաբերությունները ուսումնասիրության առարկա դարձնելու համար՝ մեղադրելով նրան հայամետության մեջ: Հայաստանում նույնպես գտնվեցին լրագրողներ ու հասարակագետներ, ովքեր մեղադրեցին մեզ նրանում, թե իբր թուրքերի թելադրանքով հայ-թուրքական հարաբերություններին նվիրված ուսումնասիրություններ ենք իրականացնելու: Մեզ և թուրքական թիմի ղեկավար Քեևտեյին մեղադրեցին դավադրության, դավաճանության և այլ հանցանքների մեջ: Երկու սոցիոլոգների նկատմամբ էլ եղան ճնշումներ, հետազոտությունն արգելելու փորձեր: Կարծում եմ, որ Թուրքիայում ավելի շատ ճնշումներ ու մեղադրանքներ արվեցին Ֆերիստի նկատմամբ:

Այս ծայրահեղական հայացքներ կրողներին հաջողվեց երկու երկրներում էլ բավականին մեծ ազդուկ բարձրացնել, հատկապես ազգայնամուլ մամուլի էջերում: Հետազոտական խմբերը ստիպված եղան ծրագրից որոշ ժամանակով հեռանալ և հնարավորին կրճատել: Բայց, չնայած խոչընդոտներին ու մամուլում մեղադրական տպագրություններին (հողվածներին), այնուամենայնիվ, մեծ դժվարություններով 2003 թվականին մեզ հաջողվեց կրկին վերսկսել աշխատանքներն ու անցկացնել սոցիոլոգիական հարցումներ՝ միաժամանակ Հայաստանում և Թուրքիայում: Հայ և թուրք սոցիոլոգների այս համագործակցությունն իր նմանը չուի մեր պատմության ողջ ընթացքում: Վաշինգտոնի Ամերիկյան համալսարանի Գլոբալ խաղաղության կենտրոնի ֆինանսական աջակցության շնորհիվ հայ-թուրքական հետազոտական խումբն իրականացրեց սոցիոլոգիական հարցումներ Հայաստանում և Թուրքիայում: Այդ նպատակի համար օգտագործվեց ամիսներ շարունակ երկար քննարկումների արդյուն-

քում մշակված մեծածավալ հատուկ հարցաթերթը: Հարցաշարի թուրքական ու հայկական տարբերակներն ամբողջությամբ նույնն էին՝ բացառությամբ մեկ հարցի, որի ձևակերպումներն երկու լեզուներով մի փոքր տարբերվում էին: Հայերեն լեզվով հարցաշարում այն ձևակերպված էր այսպես. «1910-ականների երկրորդ կեսին հարյուր հազարավոր հայեր սպանվեցին Թուրքիայում և բոնի տեղահանվեցին երկրից...»: Իսկ թուրքալեզու հարցաշարում այդ նույն հարցի ձևակերպումը գրված էր այլ կերպ. «1910-ականների երկրորդ կեսին, Անատոլիայում տեղի ունեցած բախումները շատ հայերի և թուրքերի կյանք խլեցին...»:

Այս տարիներին Թուրքիայում նույնիսկ ցեղասպանություն բառը արտասանել չէր կարելի: Առավել ևս սոցիոլոգիական հարցման ժամանակ «Ցեղասպանություն» եզրույթը հարցաթերթում տպագրելն իսկ անթույլատրելի էր համարվում: Շատ ավելի ուշ թուրքական հասարակությունում և հատկապես մտավորականների շրջանում սկսեցին խոսել հայերի ցեղասպանության մասին: 2007թ. Չրանտ Դինքի օպանությունից հետո թուրք հասարակության քաղաքական գիտակցության մեջ շատ լուրջ տեղաշարժեր եղան: Սակայն 2000թ.-ին ցեղասպանության թեման Թուրքիայում փակ թեմա էր համարվում: 1999թ. մասնակցում էի Ստամբուլի Բոսֆորի (Բոզազիչի) համալսարանում կազմակերպված միգրացիայի և փախստականների հարցերով մի գիտաժողովի: Լսարանում հավաքված էին հասարակագետներ մի քանի երկրներից և, իհարկե, Թուրքիայից: Լսարանի դիմացի պատին փակցված էր թուրքական Հանրապետության հիմնադիր՝ Քեմալ Աթաթուրքի մեծ նկարը, իսկ ետևում մինչև առաստաղ հասնող նրա արձանն էր կանգնած: Նշեմ, որ Բոսֆորի համալսարանը Ստամբուլում հիմնել էին ամերիկացիները 1863թ.: Դա առաջին ամերիկյան համալսարանն էր տարածաշրջանում: Այդ համալսարանն ավարտած ուսանողներից շատերը հետագայում զբաղեցրել են Թուրքիայում բավականին բարձր պաշտոններ: Նրանց թվում էր եղել նաև Թուրքիայի ևսիսկին վարչապետ Թանսու Չիլերը: Այնուամենայնիվ, դանիճում

տիրող լարվածությունից էս հասկացա, որ ցեղասպանության թեման առաջին անգամ էր բարձրաձայնվում այս արևմտամետ համալսարանական միջավայրում: Երբ իմ էլույթում բարձրաձայնեցի 1915թ. Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության հարցը, դանիլ-ճում բար լույթուն հաստատվեց: Ամերիկացի պրոֆեսորը, որը վարում էր գիտաժողովը, իմ էլույթից հետո անմիջապես ընդմիջում հայտարարեց՝ կանխելով հետարվոր հարցերի տարափը: Կարծում եմ, որ նա դրանով փրկում էր ցեղասպանության թեման ավելի խորացնելու ու շարունակելու անխուսափելի բանավեճից: Հնդմիջման ժամանակ ինձ մտոցեցավ Թուրքիայում Սովետական Միության նախկին դեսպան Վ.Ուոկլինը, որը հրավիրված էր Բոսֆորի համալսարան դասախոսություններ կարդալու համար և ասաց, որ ես համարձակվեցի դիպչել թուրքերի համար մի շատ ցավոտ հարցի ու, սեղմելով իմ ձեռքը, առաջարկեց իր օգնությունը՝ Ստամբուլում իմ մնալու երկու հաջորդող օրերին: Կարծում եմ, որ նա չցիտեր, որ Ստամբուլի հայատառ «Մարմարա» թերթն արդեն նյութեր էր տպագրել գիտաժողովի և իմ մասնակցության մասին: Իսկ տեղի հայ համայնքն ու եկեղեցին միշտ շատ ուշադիր էին Հայաստանից ժամանած հայրենակիցների նկատմամբ:

Ինչքանով դա «փակ» ու ցավոտ հարց էր թուրքերի համար, երևաց նաև թուրք սոցիոլոգների 2001թ.-ին Հայաստան այցելության ժամանակ: Մեր հետազոտության ծրագրի մանրամասները երկարատև քննարկելուց հետո մենք այցելեցինք Միժենակաբերդի հուշահամալիրի Ցեղասպանության թանգարանը: Իմ երկու թուրք գործընկերները թանգարանում տեսածից հետո պարզապես շատ ընկճված էին: Նրանք չէին ուզում հավատալ իրենց աչքերով տեսածին և շարունակ պնդում էին «չենք հավատում, որ այս ամենը թուրքերն են կատարել»: Միանգամայն պարզ էր, որ թուրք հասարակությունը, բոլորովին պատկերացում չուներ սեփական երկրի անցյալի ու պատմության մասին:

Թուրքիայում «հայկական հարցը» հասունացել է երկու փոխկապակցված հարցերի համատեքստում: Նախնառաջ թուրքական հասարակության որոշ հատվածների մոտ պահանջարկ է ի հայտ եկել պատմական իրադարձությունների ավելի շատ թափանցիկության: Թուրք մտավորականների թվում այդ պահանջարկը խթանել է տարբեր նախաձեռնություններ՝ վերստին գնահատելու Թուրքիայի պաշտոնապես ընդունված պատմությունը, ինչպես նաև նպաստել հայ և թուրք համայնքների միջև երկխոսությանը: Երկրորդն այն է, որ երկու երկրներում էլ հայ-թուրքական հարաբերությունները քննարկվում են աճող ինտենսիվությամբ: Հայաստանում, մասնավորապես, քննարկում են երկու երկրների միջև փակ սահմանի ու դիվանագիտական հարաբերությունների բացակայության հարցը՝ ակնկալելով, որ ներկայիս Թուրքիայի կառավարությունը, վերջիվերջո, ընդունելու է որպես ցեղասպանություն 1915թ. միլիոն ու կես հայերի սպանությունն Օսմանյան Թուրքիայում:

«Հայկական հարցի» նկատմամբ յուրաքանչյուր երկրում՝ և՛ Թուրքիայում, և՛ Հայաստանում, ինարկե, արմատավորված են որոշակի պատմական ու սոցիալական կարծրատիպ դարձած պատկերացումներ: Սակայն այս հարցը, փաստորեն, տասնամյակներ շարունակ ոչ մի զարգացում այդպես էլ չի ստացել: Այլ կերպ ասած, «թուրքական» և «հայկական» հարցերը, որոնք փոխադարձ գոյություն ունեն երկու երկրներում, կազմավորվել ու զարգացել են յուրաքանչյուր կողմում ստանձին: Երկխոսության բացակայության արդյունքում և նախապաշարմունքների պատճառով, երկու երկրներն էլ չկարողացան զարգացնել փոխշահավետ համագործակցության հարաբերություններ, այդ թվում՝ նորմալ զբոսաշրջության և առևտրի ոլորտներում:

Հայաստանի տնտեսական ռեֆորմը, հայերի ու հարևան ադրբեջանցիների միջև Ղարաբաղյան հակամարտությունը հատվեցին Թուրքիայի ներքին և արտաքին միջազգային խնդիրների ու քաղաքականության հետ: Տարածաշրջանում ռազմավարական հավասարակշռության հարցը, չնայած անհամար խոչընդոտների, կնպաստեր Թուր-



քիայի և Հայաստանի միջև վստահության ու ազատ առևտրի զարգացմանը: Չնայած բազմաթիվ շահերին ու հակամարտություններին, որոնք բաժանում են մեր երկու երկրները, դիվանագիտական բանակցությունները մնում են ամենակարևոր առաջին քայլերը դեպի այդ խնդիրների լուծումը: Չնայած երան, որ յուրաքանչյուր երկիր մտահոգված է ավելի լավ ճանաչել հարևանին, այնուամենայնիվ, տեղեկությունների ու գիտելիքների մակարդակը, որ ներկայումս գոյություն ունեն թուրքիայի և Հայաստանի միջև նվազագույնն են: Բսկ այն տեղեկությունները, որ չեն անցել քաղաքական սահմանները, հաճախ փոխադարձ խեղաթյուրված են լինում: Նման կանխակալ պատկերացումները հետագայում վերարտադրվում են ու խորանում՝ անուղղակի խողովակների միջոցով դուրս գալով երկու երկրների հասարակությունների սահմաններից:

Եթե երկու երկրների միջև պետք է նորմալ հարաբերություններ ստեղծվեն, ապա առաջին քայլը պետք է լինի նախապաշարումների հարթահարման միջոցով ավելի շատ թափանցիկության ապահովումը: Այդ նպատակին հասնելու համար, երկու կողմերն էլ պետք է աշխատեն, որպեսզի ավելի լավ հասկանան միմյանց: Կարևոր է, որ երկու կողմերն էլ շփվեն միմյանց հետ ուղղակիորեն՝ առանց արտաքին խմբերի միջամտության:

Քանի որ այդ միջազգային կապերը մասամբ են ստեղծվել, ապա ցեղասպանության «ընդունման» և «ճանաչման» փուլերն ավելի ենարավոր կդառնան հասարակական ընկալման մակարդակով: Թուրքիայի հայ և թուրք համայնքների միջև երկխոսության ներուժը կարող է ընթանալ դրական ձևերով նաև միջազգային մակարդակով: Երկխոսության ստեղծումը բազմաթիվ մակարդակներով կարևոր քայլ է՝ փոխադարձ վստահության հաստատման ճանապարհին:

Ավելի խոր հասկացողություն ստեղծելու համար թուրք և հայ հետազոտողների նախաձեռնությամբ հաջողվեց 2003-2005թ. իրականացնել այս հետախույզական նախագիծը՝ կենտրոնանալով Թուրքիայում և Հայաստանում բնակվող քաղաքացիների կոնկրետ փոխա-

դարձ ընկալումների վրա: Հետազոտության արդյունքները տպագրվեցին Հայաստանում և Թուրքիայում: Հայաստանում դրանք լույս տեսան առանձին գրքով անգլերեն լեզվով 2006 թվականին<sup>1</sup>: Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի կապակցությամբ հետազոտության կիմնական արդյունքները զեկուցվել են 2005թ. Գիտությունների Ազգային Ակադեմիայում կազմակերպված գիտաժողովում<sup>2</sup>: Մեկ տարի անց, 2006թ. հետազոտության արդյունքները տպագրվեցին նաև Ֆեդասպանության թանգարան-ինստիտուտի կողմից լույս ընծայվող ամսագրում<sup>3</sup>:

Մենք գիտենք, որ այս հետազոտության արդյունքները հեռու են այդ ընկալումների ամբողջական պատկերը տալու նպատակից: Այս ուսումնասիրությունը չի անտեսելում որևէ վերջնական պատասխան: Տեղեկատվությունը, որ մենք հավաքել ենք, կարող է այնքան էլ հաճելի չլինել քաղաքական քննարկումներում ընդգրկված բոլոր կողմերի համար: Բայց շատ կարևոր է, որ մենք հավատարիմ ենք մնացել գիտության և հավաստիության սկզբունքներին, որ արդյունքները պետք է ավելի լիարժեք տեղեկացնեն Թուրքիայի և Հայաստանի ժողովուրդների միջև եղած ընկալումները: Չնայած առկա մարտահրավերներին՝ այս համատեղ ծրագրի իրականացումը, որ կատարվել է թուրքական և հայկական թիմերի ջանքերով, վկայում է այն մասին, որ համագործակցությունը մարդկանց միջև հնարավոր է:

<sup>1</sup> Ferhat Kentel, Gevorg Poghosyan, *Armenian-Turkish Citizen's Mutual Perception and Dialogue*, Yerevan, 2006, 65 pg.

<sup>2</sup> Պ. Պողոսյան, *Թուրքիայի հասարակական կարծիքը Հայոց ցեղասպանությունից 90 տարի անց - Հայոց ցեղասպանության 90 տարելիցին նվիրված «Մեծ Եղեռն. Իրադրություն և Նստապարտում» - գիտաժողովի կուրսեր, 18-19 ապրիլի, 2005թ.*, Երևան, ՀՀ ԳԱԱ, 15 էջ:

<sup>3</sup> Ferhat Kentel, Gevorg Poghosyan, *Armenian-Turkish Relations and Mutual Perception (Sociological Survey) - Հայոց ցեղասպանության պատմության եվ պատմագրության հարցեր. Գիտական աշխատություններ, ՀՀ ԳԱԱ Հայոց Ֆեդասպանության Թանգարան-Ինստիտուտ, №12, 2006, էջ 28-47.*

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՐԻՆՆԵՐԸ

Ուսումնասիրությունը միաժամանակ իրականացվել է Թուրքիայում և Հայաստանում նույն մեթոդաբանությամբ: Ուսումնասիրության հիմնական խնդիրներն էին.

- Բացահայտել գիտելիքների կամ չիմացության մակարդակը և նախապաշարումները, որ երկու հասարակություններում առկա են միմյանց նկատմամբ.
- Բացահայտել փոխադարձ ընկալումները երկու հասարակությունների և նրանց տարբերությունները (բացասական և դրական).
- Ուրվագծել երկու հասարակություններին բնորոշ ընդհանուր մշակութային և քաղաքական արժեքները, եթե այդպիսիք մշակված են.
- Հետազոտել Հայաստանի և Թուրքիայի քաղաքացիների ակնկալիքները միմյանց և այդ պետությունների, հասարակությունների նկատմամբ:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տվյալների հավաքագրումը երկու երկրներում իրականացվել է քանակական մեթոդով (դեմ առ դեմ հարցազրույց հարցաշարի միջոցով):

Սոցիոլոգիական ուսումնասիրությունն իրականացվել է Թուրքիայում և Հայաստանում՝ ամբողջ տարածքով: Որպեսզի հետո կատարվի համեմատություն, հետազոտության հարցաշարում տեղադրվել են նույն հարցերը (հարմարեցված տեղական համատեքստին), ինչպես նաև տարբեր հարցեր, որոնք նախատեսված են արտացոլելու տեղական խնդիրները:

Կոնկրետ հետազոտական գործողությունները (հարցաթերթիկների դիզայնը և տպագրությունը, հարցազրույցների անցկացումը,

տվյալների մուտքագրումն ու քանակական վերլուծությունը SPSS իրարի օգնությամբ) իրականացրել են SAM Research & Consulting կենտրոնը Թուրքիայում և HASA (սոցիոլոգիական և մարքեթինգի հետազոտությունների) կենտրոնը Հայաստանում:

Թուրքիայում 1200 հարցվածներ ընտրվել են բազմափուլ շերտավորված պատահական ընտրանքի մեթոդով: Ստանդարտ սխալը այդպիսի ընտրանքի համար կազմում է  $\pm 2.8$  տոկոս՝ վստահության 95 ստոկոսի սիրույթում:

Շտրանքը ներկայացնում էր Թուրքիայի 18 տարեկան և ավելի բարձր տարիքի քաղաքային բնակչությունը և հիմնված էր երկու չափանիշների վրա.

1. բաշխումն ըստ աշխարհագրական տարածաշրջանների,

2. բաշխումն ըստ մեծ քաղաքների մերձակա շրջանների:

Առաջնային ընտրանքային միավորներ (PPS) էին ընտրվել երեք խոշոր քաղաքների՝ Ստամբուլի, Անկարայի և Իզմիրի թաղամասերում ու նրանց հարևան «մերձակայքերում», իսկ մնացած միավորները՝ երկրի յոթ աշխարհագրական շրջանների քաղաքներում: Այս ընտրանքային միավորներն ընտրվել են բնակավայրերի բնակչության չափին համաչափ: Նույն մեթոդը (PPS) օգտագործվել է նաև հաջորդ քայլի՝ մետրոպոլիտան տարածքում՝ «շրջաններ» ընտրելու նպատակով: Մրան հետևել է յուրաքանչյուր բնակավայրում փողոցների ընտրությունը պարզ պատահական ընտրանքի միջոցով և համակարգված ընտրանքով, յուրաքանչյուր փողոցում ընտրվել են տնային տնտեսությունները:

Շտրանքի բաշխումը (18 տարեկան հասակի ու ավելի բարձր) հիմնված էր Վիճակագրության պետական ինստիտուտի (DIE) կողմից հրատարակված 1999թ. ընտրությունների գրանցված ընտրացուցակների հիման վրա: Շրջանների թիվը յուրաքանչյուր ընտրված կատեգորիայում հաշվարկվել է՝ հիմք ընդունելով շուրջ 10 հարցազրույցներ մեկ հարևան թաղամասում և 20 հարցազրույցներ մեկ շրջա-



նում սկզբունքը: Այսպիսով՝ յուրաքանչյուր շրջանում ընտրվել են երկուական թաղամասեր:

Դաշտային աշխատանքները իրականացվել են 35 քաղաքների 68 թաղամասերում (Տես Հավելված I, Աղյուսակ 1): Վերջնական տուուգամար SAM-ի գլխամասային գրասենյակում առանձնացվել ու վերլուծության համար հաստատվել էր 1219 հարցագրույց:

Հայաստանում սոցիոլոգիական հետազոտությունն իրականացվել էր՝ օգտագործելով նույն տարածքային համաչափ ընտրանքի սկզբունքը, որը հիմնված էր պաշտոնական տվյալների՝ 2001 թվականի մարդահամարի արդյունքների վրա<sup>4</sup>:

Ազգային ընտրանքը Հայաստանի համար ներառում էր բոլոր 10 մարզերը՝ գումարած Երևան-մարզը: Հարցվողներն ընտրվել են բազմափուլային շերտավորված ընտրանքի միջոցով: Հայաստանի տասնմեկ մարզերի քաղաքային բնակչությունը բաշխվել էր հիմնական ընտրանքային տարածքներում համամասնական ձևով, այնպես որ բաժնում կազմի 1000 հարցագրույց: Հայաստանի քաղաքային ներկայացուցչական ընտրանքը 1000 հարցվողների համար տրված է Հավելված I, Աղյուսակ 2-ում:

Հայաստանում հարցագրույցները անցկացվել են ընդհանուր թվով 85 ընտրանքային կետերում: Տնային տնտեսություններն ընտրվել են պատահական երթուղային տեխնիկայի միջոցով (ըստ «աստղ-սկզբունքի» մեկնարկային» կետից):

Յուրաքանչյուր տնային տնտեսությունում ընտրվել է ընտանիքի միայն մեկ չափահաս պատասխանող (18 տարեկան կամ ավելի)՝ ըստ սոցիոլոգիայում հայտնի Քիշի պատահական մեթոդի: Բոլոր հարցագրույցները անցկացվել են դեմ առ դեմ մեթոդով՝ պատասխանողի տանը: Բոլոր հարցվողները Հայաստանի քաղաքացիներ էին և տան բնակիչ (այն բնակարանի, որտեղ անցկացվել են նրանց հետ հարցագրույցները): Ստանդարտ սխալը այդպիսի ընտրանքի համար կազմում է ±3%՝ վստահության 95% տիրույթում: Հարցագրույցավարի

<sup>4</sup> www.armstat.am

աշխատանքը վերահսկվել է պատահականորեն՝ անցկացված հարցագրույցների 15%-ի չափով: Բերենք այստեղ հարցման համառոտ ժողովրդագրական արդյունքները (Տես Հավելված I, Աղյուսակ 3-7):

Թուրքիայի ընտրանքում հարցվածների միջին տարիքը կազմել էր 36,4 տարի և ավելի փոքր էր, քան Հայաստանի ընտրանքում - 43,5 տարի (Հավելված I, Աղյուսակ 4): Սա գալիս է նրանից, որ Թուրքիայի բնակչությունում երիտասարդների թիվը ավելի մեծ է, քան Հայաստանում:

Միջին կրթական մակարդակը Հայաստանի ընտրանքում ավելի բարձր է, քան Թուրքիայում: Այսպիսով նրանք, ովքեր ավարտել են Թուրքիայում տարրական դպրոցը (5 տարի) կազմել է 44%, Հայաստանում այդ ցուցանիշը 3,5% է: Երանք, ովքեր ձեռք են բերել բարձրագույն համալսարանական կրթություն Թուրքիայում կազմել են 11,8%, իսկ Հայաստանում երեք անգամ ավելի՝ 31,9% (Հավելված I, Աղյուսակ 5):

Հայաստանում հանրային ոլորտի աշխատակիցների, կենսաթոշակառուների և գործազուրկների թիվը համեմատաբար ավելի մեծ է, իսկ Թուրքիայում խանութպանների և տնային տնտեսուհիների թիվն է համեմատաբար մեծ (Հավելված I, Աղյուսակ 6):

Մտանքի ընդհանուր ամսական եկամտի մակարդակը Հայաստանում անհամեմատ ավելի ցածր է, քան Թուրքիայում: Այսպես օրինակ, ամսական 100 ԱՄՆ դոլարից պակաս եկամուտ ունեցող ընտանիքները հարցման ժամանակ (2003թ.) Հայաստանում կազմում էին 81,8%, իսկ Թուրքիայում ընդամենը 10,5%: (Հավելված I, Աղյուսակ 7):

## Գլուխ I. Ի՞նչ գիտեն մեր հասարակությունները միայնց մասին

Այս գլխում քննության է առնվում երկու ժողովուրդների իրազեկվածությունը միայնց նկատմամբ: Մեզ հետքրքրում էր, թե ինչ գիտելիքներ ու պատկերացումներ ունեն Հայաստանի ու Թուրքիայի քաղաքացիները միայնց երկրների պատմության, աշխարհագրության, քաղաքական կառուցվածքի, արտաքին հարաբերությունների և այլ հարցերի մասին:

### §1. Աշխարհագրություն

Ստորև բերված աղյուսակում տրված են հայ և թուրք հարցվածների պատասխանները, որոնք արտացոլում են նրանց պատկերացումները հարևան երկրի տարածքի ու բնակչության ծավալի մասին:

**Աղյուսակ I. Ինչպես կգնահատեք ժամանակակից Հայաստանը / Թուրքիան տարածքային առումով.**


	Հայաստան (Թուրքիայի մասին)	Թուրքիա (Հայաստանի մասին)
Այն մեծ երկիր է	52,4	7,2
Այն փոքր երկիր է	4,2	39,8
Այն ոչ մեծ է, ոչ էլ փոքր	41,0	18,5
Չգիտեմ	2,4	34,5

Աղյուսակը ցույց է տալիս, որ հայ հարցվողների մեծամասնությունը (52,4%) գնահատել է Թուրքիային որպես մեծ երկիր, ևս 41%-ը այն կարծիքին է, որ Թուրքիան ոչ մեծ, ոչ էլ փոքր երկիր է: Թեև մեծ թվով թուրք հարցվածներ (34,5%) դժվարացել են որևէ կարծիք արտահայտել ժամանակակից Հայաստանի տարածքի վերաբերյալ, մնացած մեծամասնությունը՝ 65,5%-ը, կարծում է, որ Հայաստանը փոքր երկիր է: Կարելի է ենթադրել, որ, պատասխանելով այս հարցին, հարցվողները


չստ հավանական է հարևան երկրի տարածքը գնահատելու համար որպես համեմատության հիմք են վերցրել իրենց սեփական երկրի տարածքը:

## Գծապատկեր I. Հարցվածների պատկերացումները հարևան երկրի բնակչության մասին

### 1.1 Հայաստանում



### 1.2 Թուրքիայում



Գծապատկեր 1.1 և 1.2-ը վկայում են, այն մասին, որ և՛ հայ և՛ թուրք հարցվածները շատ աղոտ պատկերացումներ ունեն միմյանց երկրների բնակչության մասին: Այսպիսով, չնայած որ հայ հարցվածների մեծ մասի պատասխանները Թուրքիայի բնակչության վերաբերյալ կենտրոնացված են ճիշտ տիրույթում՝ 40-60 միլիոն բնակիչ, այնուամենայնիվ, պատասխանների ցրվածությունը շատ մեծ է: Միևնույն ժամանակ, թուրք հարցվածների մեծ մասը (51,3%) դժվարացել է տալ որևէ մտավոր գնահատական Հայաստանի բնակչության մասին և միայն 11,6% -ը է տվել ճիշտ պատասխան՝ 2-3 միլիոն: Հետաքրքրական է նաև այն, որ թուրք հարցվածների մոտ մեկ երրորդը՝ 32,6%-ը, կարծում են, որ ժամանակակից Հայաստանի բնակչությունը շատ ավելի մեծ է և կազմում է 5-10 ու ավելի միլիոն: Այսպիսի ուռճացված պատկերացում հարևան երկրի մասին միգրացե գալիս է հայկական մեծ սփյուռքի ազդեցության ու նրա ազդեցության պարագայից:

Հարցվածների վատ իմացությունը միմյանց երկրների մասին արտացոլվել է նաև հարցման ընթացքում տրված մի շարք այլ հարցադրումների պատասխաններին:

**Աղյուսակ II. Արդյո՞ք Թուրքիան / Հայաստանը մուտք ունեն դեպի ձով (ծովեր)**

	Հայաստանում (Թուրքիայի մասին)	Թուրքիայում (Հայաստանի մասին)
Այո	95,9	15,6
Ոչ	0,9	44,1
Զգիտեմ	3,2	40,3

Այսպիսով, Հայաստանի հարցվածների ճշող մեծամասնությունը (95,9%) գիտի, որ Թուրքիան կարող է օգտվել ձովերից: Աղյուսակը ցույց է տալիս, որ թուրք պատասխանողները նույնիսկ ավելի քիչ տեղեկություններ ունեն Հայաստանի մասին. 40,3%-ը չգիտի, թե արդյոք

Հայաստանն ունի ձովային սահման, իսկ նրանց 15,6%-ը համոզված է, որ Հայաստանը նու երբ ունի դեպի ձով:

**Աղյուսակ III. Եթե ունեն, ապա դեպի ո՞ր ձով (ծովեր)**

	Հայաստանում (Թուրքիայի մասին)	Թուրքիայում (Հայաստանի մասին)
Սև ձով	82,7	45,4
Միջերկրական ձով	71,3	2,1
Էգեյան ձով	21,9	5,2
Կասպից ձով	6,6	29,4
Մարմարա ձով	1,3	0,0
Զգիտեմ	3,0	17,0

Ինչպես տեսնում ենք, Հայաստանում հարցվածների շատ փոքր տոկոսը գիտի, որ Թուրքիան կարող է օգտվել նաև Էգեյան և Մարմարա ձովերից (համապատասխանաբար 21,9% և 1,3%): Ավելին, թուրք պատասխանողների մոտավորապես կեսը՝ 45,4% վստահ է, որ Հայաստանը մուտք ունի դեպի Սև ձով, իսկ մոտ մեկ երրորդը՝ 29,4% կարծում է, որ մուտք ունի դեպի Կասպից ձով: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ «ծովից ձով Հայաստանի» երազանքը դեռ վատ է մնացել մեր թուրք հարևանների հանրային պատմական գիտակցության մեջ:


**§2. Քաղաքական համակարգ, կրոն**

Ինչպես երևում է ստորև բերված գծապատկերի պատասխաններից՝ Թուրքիայում հարցվածների գրեթե կեսը տեղյակ չի Հայաստանի թաղաքական կառավարման տեսակից: Միևնույն ժամանակ, այս հարցին պատասխանած հարցվածների մեծ մասը (17,8%) ճիշտ է պա-




տախանել: Հետաքրքիր է, որ հարցվածների երկրորդ խոշոր խումբը (13,5%) համոզված է, որ Հայաստանի կառավարման համակարգում դեռևս գերակշռում է կոմունիստական կուսակցությունը, մինչդեռ այն նույնիսկ ներկայացված չէ մեր ներկայիս Ազգային ժողովում: Նման արդյունք, սակայն, կանխատեսելի էր՝ հաշվի առնելով խորհրդային դարաշրջանի տևական ազդեցությունը նախկին խորհրդային հանրապետությունների վրա: Թուրքիայի բարձրագույն կրթությամբ հարցվածների 30,6%-ը ճիշտ է պատասխանել այս հարցին, իսկ տարրական, միջին կամ բարձր դպրոցական կրթություն ունեցող հարցվածների մեջ ճիշտ պատասխան տվածները կազմել են շուրջ 16-17%: Իսկ այն հարցվածների մեջ, ովքեր չունեն որևիցե ֆորմալ կրթություն (62,2%) ընդհանրապես պատկերացում չունեն, թե ինչպիսին է քաղաքական կառավարումը Հայաստանում:

Գծապատկեր 2. Ինչպիսի՞ քաղաքական կառավարում է գերիշխում Հայաստանում



Մեր հետազոտության արդյունքները վկայում են, որ հայ հարցվողները նույնպես ճշգրիտ պատկերացումներ ու գիտելիքներ չունեն Թուրքիայում իշխող քաղաքական կարգի մասին: Հայաստանում հարցվածների մեծամասնությունը (63%), կարծում է, որ Թուրքիայում կառավարությանը գերիշխում է նախագահը:

Գծապատկեր 3. Ինչպիսի՞ քաղաքական կառավարում է գերիշխում Թուրքիայում



Համեմատական վերլուծությունը հավաստում է, որ հայ հարցվածների դրական գիտելիքները այս հարցի մասին խիստ կախված չեն իրենց կրթական մակարդակից:

Հետազոտության այլ ոլորտներին առնչվող հարցադրումների համեմատ, հարցվածները առավել վստահ իմացություն են ցուցաբերել միայնց կրոնական պատկանելության վերաբերյալ:


Աղյուսակ IV. Ո՞րն է թուրքերի/հայերի մեծամասնության կրոնական պատկանելությունը

	Հայաստանում (Թուրքիայի մասին)	Թուրքիայում (Հայաստանի մասին)
Բուդդիստական	0,0	1,2
Քրիստոնյա	0,0	54,6
Մահմեդական	99,2	1,3
Հուդայական	0,0	16,8
Այլ	0,0	25,5
Չգիտեմ	0,8	0,6

Ինչպես տեսնում ենք, հարցվածների մեծամասնությունը և՛ Հայաստանում, և՛ Թուրքիայում տվել են ճիշտ պատասխաններ:

Սակայն հետաքրքիր է որ մտավորապես ամեն վեցերորդ թուրք պատասխանող կարծում է, որ հայերի կրոնական պատկանելությունը հուլիսիան է:

**Գծապատկեր 4. Արդյո՞ք հարևան երկիրը՝ Հայաստանը / Թուրքիան, ունի պաշտոնական կրոն**



Իսկ այն հարցին, թե արդյոք հարևան երկիրն ունի պաշտոնական կրոն, թե ոչ, երկու երկրների հարցվողները չեն կարողացել ճիշտ պատասխանել: Հայաստանում հարցվածների մեծ մասը (68,5%) և Թուրքիայում հարցվածների զգալի մասը (40,4%), փաստորեն, իրենց համոզմունքն են հայտնել, որ հարևան երկիրը, ոչ թե աշխարհիկ, այլ կրոնական հանրապետություն է: Ընդ որում, հայ հարցվածների շրջանում Թուրքիան շատ ավելի մեծ «կրոնական» իմիջ ունի, քան Հայաստանը թուրք հարցվածների աչքերում: Հետաքրքիրն այն է, որ բարձր կրթական մակարդակ ունեցող հարցվածները հավժված են տալ սխալ պատասխան. բարձրագույն կրթությամբ հայ հարցվածների 70,5%-ը և միջնակարգ կրթությամբ 67,1% -ը, կարծում են, որ Թուրքիան ունի պաշտոնական կրոն:

Շատ նման միտում հնարավոր է դիտարկել Թուրքիայում ստացված պատասխաններում, սակայն ավելի ցածր տոկոսներով: Թուրքիայում նրանք, ովքեր հավատում են, որ Հայաստանն ունի պաշտոնական կրոն միջնակարգ կրթությամբ հարցվածների շրջանում կազմում են

47%: Իսկ բարձրագույն կրթությամբ հարցվածների շրջանում 46,5%: Թուրքիայում բարձրագույն կրթությամբ հարցվածների 22,9% -ը տվել է ճիշտ պատասխան: Ավելացնենք, որ նրանք, ովքեր չգիտեն, թե արդյոք Հայաստանը աշխարհիկ պետություն է, թե ոչ, Թուրքիայում ցածր կրթական մակարդակ ունեցող հարցվածների շրջանում 64,9%-ի է հասնում: Այն հարցվածները, ովքեր տվել էին դրական պատասխաններ վերը նշված հարցին, այնուհետև խնդրել էինք նշել պաշտոնական կրոնը: Պատասխանները հիմնականում կրկնվել են, ինչպես արդեն նշվել է Աղյուսակ Գ-ում (տե՛ս Հավելված I, Աղյուսակ 8):

### Գ3. Պատմություն

Հայաստանում հարցվածների ճնշող մեծամասնությունը (94,6%) հստակ համոզված է, որ հայ ազգն առաջին է ի հայտ եկել պատմության բնահարթակում: Իսկ Թուրքիայում հարցվածների մեծ մասը (60,4%) համոզված են, որ թուրքերն ավելի հին ազգ են: Միևնույն ժամանակ, թուրք հարցվածների որոշ մասը (28,6%) այս հարցին տվել է ավելի չեզոք պատասխան՝ նշելով, որ երկու ազգերն էլ՝ հայերը և թուրքերը, հնագույն ժողովուրդներ են:

### Աղյուսակ V. Ո՞ր ժողովուրդն է, հայերը թե թուրքերը, առաջինը հայտնվել պատմության բնահարթակում

	Հայաստանում	Թուրքիայում
Հայերը	94,6	7,6
Թուրքերը	0,7	60,4
Նրանք երկուսն էլ հնագույն ժողովուրդ են	4,7	28,6

Նման արդյունքը, մեր կարծիքով, պայմանավորված է առնվազն երկու գործոններով. ա) օբյեկտիվ՝ այսինքն համաշխարհային պատ-

մությանն առնչվող տեսակետների տարբերությունը գալիս է հանրային կրթությունից.

բ) սույնիկտիվ, այսինքն՝ մարդկանց միտումով՝ որոշակի պատմական փաստերն ընկալել և փոխանցել իրենց համար առավել բարենպաստ ձևով:

Հետազոտությանը ստացված տվյալների վերլուծությունը (տե՛ս Հավելված I, Աղյուսակ 9) վկայում է այն մասին, որ հայկական կողմի հարցվածները շատ ավելի համախմբված պատասխաններ են տվել երկու երկրների միջև պատմական հարաբերությունների վերաբերյալ, իսկ թուրքական կողմի հարցվածները այս բավականին բարդ հարցում կարծես թե ավելի չեզոք դիրքորոշում են ցուցաբերել:

Ստացված տվյալների (Հավելված I, Աղյուսակ 9) հիման վրա, կարելի է անել հետևյալ հետևությունները՝

ա) հայ և թուրք հարցվածների մեծ մասը համարում է, որ երկու ժողովուրդներն ունեն ընդհանուր մշակութային տարրեր, ինչպիսիք են՝ երաժշտությունը, ժողովրդական բանահյուսությունը և ազգային խոհանոցը: Միևնույն ժամանակ, թուրք հարցվածների մի զգալի տոկոսը (39,7%) այսպիսի հարցապնդման հետ համաձայն չէ:

բ) Հայաստանում հարցվածների ճնշող մեծամասնությունը (97,7%) համաձայն չէ այն հարցապնդման հետ, որ մինչև 20-րդ դարը, թուրքերի ու հայերի միջև բախումներ չեն եղել: Մինչդեռ թուրք հարցվածների միայն մեկ երրորդը համաձայն չէ այս հարցապնդման հետ, իսկ 28%-ը այս հարցի վերաբերյալ հստակ պատկերացում չունի:

գ) Երկու երկրներում էլ հարցվածների մեծ մասը համաձայն է, որ այսօրվա Թուրքիայի տարածքները մինչև թուրքերի այստեղ գալը բնակեցված էին հայերով և համաձայն չեն, որ Թուրքիայում այժմ ապրող հայերը եկել են Խորհրդային Միության փլուզումից հետո:

դ) Հայաստանում հարցվածները միանգամայն համոզված են, որ Առաջին Համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիայում բազմաթիվ հայեր ցեղասպանվեցին ու ստիպված բռնագաղթվեցին այլ երկրներ: Մինչդեռ Թուրքիայում հարցվածների միայն կեսն է

(47,5%) համաձայն այն հարցապնդման հետ, որ հայ բնակչությունը ստիպված բռնագաղթվեց այլ երկրներ, իսկ նրանց ավելի քան մեկ քառորդը (27,8%) համաձայն չէ նույնիսկ այս մտքի հետ:

ե) Գրեթե բոլոր հայ հարցվածները համոզված են, որ «1910թ. երկրորդ կեսին հարյուր հազարավոր հայեր սպանվել են Թուրքիայում և արտաքսվել երկրից»: Ինչ վերաբերում է թուրք հարցվածներին, (թեև այս հարցապնդումը թուրքական տարբերակի հարցաթերթում ձևակերպված էր մի փոքր այլ կերպ, քան հայերեն հարցաթերթում), ապա պատկերն այստեղ բոլորովին այլ էր: Նրանց մեծ մասը կարծում է, որ այդ ժամանակահատվածում «Անատոլիայում բախումների ընթացքում երկու համայնքներում շատ հայեր և թուրքեր զրկվեցին կյանքից»:

Երկու երկրներում էլ հարցվածները համաձայն են, որ Թուրքիայում կան բազմաթիվ հայկական եկեղեցիներ և մշակութային հուշարձաններ:

#### §4. Արտաքին քաղաքականություն

Հարցվողների հիմնարար պատկերացումները հարեան երկրի արտաքին հարաբերությունների վերաբերյալ բացահայտելու նպատակով հարցման մասնակիցներին մենք խնդրել էինք բնութագրել Թուրքիայի/Հայաստանի հարաբերությունները մի շարք երկրների հետ (տե՛ս Հավելված I, Աղյուսակ 10):

Համաձայն Հայաստանում հարցվածների՝ Թուրքիան ամենավառ հարաբերություններն ունի Հայաստանի, Հունաստանի և Ֆրանսիայի հետ, համեմատաբար չեզոք հարաբերություններ ունի Ռուսաստանի, Իսրայելի և Բուլղարիայի հետ և լավ հարաբերություններ ունի Ադրբեջանի, ԱՄՆ-ի և Վրաստանի հետ:

Շատ Թուրքիայում հարցվածների՝ Հայաստանն ամենավառ հարաբերություններն ունի Թուրքիայի, Ադրբեջանի և Իրանի հետ, համեմատաբար չեզոք հարաբերություններ ունի կրկին Թուրքիայի, Բուլղարիայի և Վրաստանի հետ, իսկ լավագույն հարաբերություններն



ունի Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Հունաստանի, Ռուսաստանի և Գերմանիայի հետ: Հատկապես պետք է նշել, որ թուրք հարցվածների գրեթե հավասար տոկոսի կարծիքով Հայաստանն ունի Թուրքիայի հետ և՛ վատ, և՛ չեզոք հարաբերություններ (40,1% և 42,2% համապատասխանաբար): Հարկ է նշել նաև, որ ըստ թուրք հարցվածների՝ Հայաստանի հարաբերությունները Թուրքիայի հետ ավելի վատ են, քան Ադրբեջանի հետ:

Մեր կարծիքով, այս հարցին տրված պատասխանները թելադրված էին ոչ թե հարցվածների՝ հարևան երկրի արտաքին կապերի մասին փաստացի գիտելիքներով, այլ իրենց երկրի արտաքին հարաբերությունների սեփական պատկերացումներով և նրանց փոխադարձ նախապաշարմունքներով: Դա նշանակում է, որ հարցվածները հակված էին մտածել, որ այն երկրների հետ, որ Թուրքիան ունի լավ հարաբերություններ, Հայաստանը ենթադրաբար պետք է ունենա վատ հարաբերություններ և հակառակը: Բացի այդ, ըստ երևույթին, թուրք հարցվածները մեծ նշանակություն են տալիս կրոնական պատկանելությանը և կարծում են, որ կրոնական դիրքորոշումները առավել որոշիչ գործոն կարող են լինել արտաքին քաղաքականության մեջ: Թուրք հարցվածներն ակնհայտ դրսևորում են ցույց տվել այսպիսի նախապաշարմունքի՝ ենթադրելով, որ հայ-իրանական հարաբերությունները պետք է լինեն այնքան վատը, որքան վատն են հայադրբեջանական հարաբերությունները: Չնայած այն հանգամանքին, որ, ի թիվս այլ հարևան երկրների, Հայաստանը գտնվում է լավագույն հարաբերությունների մեջ նաև Իրանի հետ, յուրաքանչյուր չորրորդ Թուրքիայի պատասխանող կարծել է, որ այդ հարաբերությունները պետք է վատը լինեն:

Փոխադարձ ընկալումները պարզելու համար, մենք հարցրել էինք նաև, թե որոնք են հարցվածների կարծիքով թուրքերի/հայերի գործունեության այն ոլորտները, որտեղ նրանք առավել աչքի են ընկնում: Հայաստանում հարցվածների կարծիքով թուրքերն առավել հաջող են առևտրի, փրկմանի և դիվանագիտության, ինչպես նաև գյուղատնտե-

սության, տուրիզմի, սպորտի /ըմբշամարտի/ և թեթև արդյունաբերության ոլորտներում (տե՛ս Հավելված I, Աղյուսակ11): Ըստ թուրք հարցվածների՝ հայերն առավել հայտնի են եղել հեռուստա ոլորտներում՝ առևտուր, արվեստ, ոսկերչություն և արհեստավորություն (տե՛ս՝ u Հավելված I, Աղյուսակ12): Փաստորեն, հայ հարցվածները նշել են ոչ միայն մասնագիտություններ, այլ նաև Թուրքիայի տնտեսության ոլորտներ: Միևնույն ժամանակ թուրք հարցվածները նշել են միայն հայերի այն մասնագիտությունները, որոնցով նրանք ավանդաբար զբաղվել են և բավականին հաջողակ են եղել: Սակայն իրենք չեն նշել Հայաստանի որևիցե ոլորտ, ինչը վկայում է այն մասին, որ թուրք հարցվածները բավական տեղուկություն չունեն հարևան երկրի՝ Հայաստանի Հանրապետության մասին: Նրանց դատադրություններն ու պատկերացումները հայերի ու մեր երկրի մասին առաջացել են միայն Թուրքիայում՝ ենթակայումս բնակվող հայերի հետ ունեցած շփումների հիման վրա:

Երբ հայերին հարցրեցինք, թե ինչպիսի հայտնի թուրք գործիչների են նրանք ճանաչում, առաջինը նշել էին Աթաթուրքի (17,8%), Թախթախի (13,7%), Էնվերի (9,8%) և Սուլթան Համիդի (6,6%) անունները՝ ավելացնելով, որ դրանք հայ ժողովրդի ամենամեծ թշնամիներն են եղել (տե՛ս՝ u Հավելված I, Աղյուսակ13):

Թուրք հարցվածների ճնշող մեծամասնությունը (81,9%) չի կարողացել որևէ հայտնի ազգությամբ հայի անուն նշել: Մնացած 14 տոկոսը տվել էին տարբեր հայտնի մարդկանց անուններ՝ այդ թվում Շարլ Ազնավուր, Շեր, Էթյեն Մահտուպյան, Նուրբար Թերզյան և այլ հայերի անուններ, բայց նրանց կողքին նշել էին նաև մի շարք Թուրքիայում բնակվող հայտնի հրեաների ու երանց պատկանող ընկերությունների անուններ (տե՛ս՝ u Հավելված I, Աղյուսակ14): Նշել էին նաև մի քանի թուրք գործիչների անուններ՝ ըստ երևույթին ենթադրելով, որ վերջիններս միզոցե ազգությամբ հայ են: Այսպիսի «լողված» պատկերացումներ էին ստացվել հայտնի հայերի, հրեաների ու թուրքերի մա-

սին Թուրքիայում անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքում:

Ամփոփելով այս բաժինը՝ տեսնենք, թե ինչպես են իրենք՝ հարցվածները, գնահատում իրենց գիտելիքներն ու իմացության աստիճանը հարևան երկրների մասին:

**Աղյուսակ VI. Ձեր կարծիքով, որքան՞ վ եք Դուք ճանաչում հարևան երկրները:**

	Լավ %		Որոշ չափով %		Բոլորովին ոչ %	
	Հայաստան	Թուրքիա	Հայաստան	Թուրքիա	Հայաստան	Թուրքիա
Ադրբեջան	21,5	12,4	78,4	63,7	0,1	24,0
Հայաստան /Թուրքիա	10,8	4,7	88,8	51,4	0,4	44,0
Վրաստան	25,1	5,3	74,8	47,7	0,1	46,9
Իրան	11,3	11,2	84,9	59,8	3,8	29,0
Իրաք	-	11,6	-	61,3	-	27,1
Սիրիա	-	10,2	-	55,9	-	33,9
Բուլղարիա	-	9,7	-	55,4	-	34,9
Հունաստան	-	12,5	-	57,3	-	30,2

Ինչպես տեսնում ենք, երկու երկրների հարցվողներն էլ բավականին համեստ են գնահատել իրենց տեղեկացվածությունը հարևան երկրների մասին: Աղյուսակից սակայն երևում է, որ հայերը մի քիչ ավելի լավ են տեղյակ Ադրբեջանի, Վրաստանի ու Թուրքիայի մասին (երանց չէինք հարցրել Իրաքի, Սիրիայի, Բուլղարիայի և Հունաստանի մասին), քան թուրք հարցվածները: Հայ հարցվածները (25,1%) իրենց գիտելիքները Վրաստանի մասին լավ են գնահատել: Ցուցակը շարունակում է Ադրբեջանը (21,5%), Իրանը (11,3%) և Եգրպիակում Թուրքիան (10,8%): Թուրք հարցվածները, ովքեր ավելի համեստ են գնահատել իրենց գիտելիքները, կարծում են, որ լավ գիտեն Հունաս-

տանի և Ադրբեջանի մասին (համապատասխանաբար՝ 12,5% և 12,4%), սակայն ընդհանուր առմամբ նրանք բավականին ցածր են գնահատել իրենց գիտելիքների մակարդակը հարևան երկրների մասին՝ հատկապես Վրաստանի (46,9% չգիտեն) և Հայաստանի (44% չգիտեն) մասին:

Նման գնահատականը շատ հետաքրքիր է, քանի որ, դատելով հարցվածների՝ բոլոր հարցերին տրված պատասխաններից, կարելի է կրահանգել, որ Թուրքիայում հարցվածները շատ ավելի քիչ են տեղյակ Հայաստանի՝ որպես հարևան երկրի մասին, քան հայերը Թուրքիայի մասին: Այն փաստը, որ թուրք հարցվածները գիտեն, որ Հայաստանի մասին իրենց գիտելիքները բավարար չեն, հնարավորություն չի տալիս նրանց ավելի հստակ և համախմբված պատկերացում կազմել հարևան Հայաստանի մասին:

Ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, հարևան երկրների մասին տեղեկությունների ամենատարածված աղբյուրը բոլորի համար (ինչպես հայ, այնպես էլ թուրք հարցվածների հավատամամբ) Մեդիա/TV և պատմական գրքերն են հանդիսանում: Հայ հարցվածների մոտ մեծահասակներն ու ընտանիքների տեղամերը եռյուկես կարևոր աղբյուրներ են հանդիսացել Թուրքիայի և Վրաստանի մասին տեղեկություններ ստանալու համար (տե՛ս Հավելված I, Աղյուսակ 15):

Նման արդյունքը ես մեկ անգամ վկայում է այն մասին, որ ՋԼՄ-ներն այժմ կարող են վճռական ազդեցություն ունենալ մարդկանց տարբեր կողմորոշումների ու վերաբերմունքի ձևավորման վրա: Այն նաև ցույց է տալիս, որ, տարածելով արդար ու անաչառ տեղեկատվություններ, նրանք կարող են մեծ ներդրում ունենալ ազգերի մոտ միմյանց մասին իրազեկությունը բարձրացնելու և գոյություն ունեցող բացասական կարծրատիպերը վերացնելու գործում:

Գլուխ II. Փոխադարձ վերաբերմունք

§1. Վերաբերմունք

Այս բաժնում քննարկվում են ժամանակակից հայերի և թուրքերի միջև փոխադարձ վերաբերմունքն ու ընկալումները: Մի շարք ուղղակի և անուղղակի հարցադրումների միջոցով ձգտել ենք բացահայտել հարցվածների կարծիքը հայ-թուրքական հարեբերությունների և պետությունների անցյալի, ներկայիս վիճակի և ապագայի մասին, ինչպես նաև բացահայտել այն պատկերացումներն ու կարծրատիպերը, որ հայերն ու թուրքերն ունեն միմյանց նկատմամբ:

Աղյուսակ VII. Ինչպե՞ս կբեռնագրեք ընդհանուր առմամբ հայ-թուրքական հարաբերությունների վիճակը արդի ժամանակներում:

Շատ վատ %		Վատ %		Ոչ լավ, ոչ վատ %		Լավ %		Շատ լավ %		Դժ. պատ. %	
Հայ	Թուրք	Հայ	Թուրք	Հայ	Թուրք	Հայ	Թուրք	Հայ	Թուրք	Հայ	Թուրք
18.9	6.6	60.4	30.8	17.9	45.4	0.5	10.9	0.0	0.2	2.3	6.2

Ինչպես երևում է աղյուսակից, հայ հարցվածների մեծամասնությունը բնութագրել է հայ-թուրքական հարաբերությունները որպես «վատ»: Իսկ թուրք հարցվածների գրեթե կեսը կարծում են, որ հարաբերությունները ո՛չ լավ են, ո՛չ վատ: Պետք է նաև նշել, որ 1000 հայ հարցվածներից միայն 5-ն են գնահատել Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունները «լավ» և նրանցից ոչ ոք՝ «շատ լավ»: Մինևն այն ժամանակ, յուրաքանչյուր հինգերորդ հայ պատասխանող գնահատել է այդ հարաբերությունները որպես «շատ վատ»: Հակառակը, թուրք պատասխանողների յուրաքանչյուր տասներորդը որակում է հարաբերությունները որպես «լավ»:

Աղյուսակ VIII. Ձեր կարծիքով, հետևյալ հաստատումներից ո՞րն է յավազույն նկարագրում թուրքերի/հայերի տեսակետը հայ և թուրք ժողովուրդների ներկայիս հարաբերությունների վերաբերյալ:

	Հայ	Թուրք
Թուրքերը/հայերը սովորաբար լավ հարաբերությունների մեջ են հայ/թուրք ժողովրդի հետ	0,9	14,2
Թուրքերը/հայերը սովորաբար սպառնալիք են գզում հայ/թուրք ժողովրդի կողմից	14,0	14,9
Թուրքերը/հայերը սովորաբար չեն սիրում հայ/թուրք ժողովրդին	51,3	33,6
Երկու կողմերի նախախնամությունը խանգարում է հայ և թուրք ժողովուրդների հարաբերությունների յարկավանքը	30,0	24,4
Կեղտաբերում են պատասխանել	3,8	12,8

Հայ հարցվածների մոտ այն զգացումը, որ «թուրքերը սովորաբար լավ հարաբերությունների մեջ են հայ ժողովրդի հետ», գրեթե գոյություն չունի, մինչդեռ թուրք հարցվածների 14,2%-ը համարում են, որ «հայերը սովորաբար լավ հարաբերությունների մեջ են թուրք ժողովրդի հետ»: Նույն ձևով, հայ հարցվածների մեծամասնությունը (51,3%) կարծում են, որ թուրքերը սովորաբար չեն սիրում հայ ժողովրդին, իսկ թուրքերի մոտ այդ կարծրատիպը մի փոքր ավելի թույլ է (33,6%): Սակայն հայ հարցվածների մեջ նրանք, ովքեր ընդունում են, որ երկու կողմերի դեպքում էլ նախապաշարունակները կանխում են հայ և թուրք ժողովուրդների հարաբերությունների բարելավումը, ավելի բարձր է (համապատասխանաբար՝ 30% և 24,4%):


Նևտաքքիբն այն է, որ հարցմանը մասնակցած հայ կանանց շրջանում մեծամասնությունը աջակցում է այն մտքին, որ թուրքերը, ընդհանուր առմամբ, չեն սիրում հայերին, ի տարբերություն տղամարդ հարցվածներին, որոնց մեջ ավելի բարձր է նրանց տոկոսը, ովքեր հակված են համաձայնել, որ նախապաշարունակները խոչընդոտում են




հայ-թուրքական հարաբերությունների բարելավմանը: Այդ տարբերությունները թուրք հարցվածների շրջանում ավելի փոքր է եղել (տե՛ս Գծապատկեր 5):

**Գծապատկեր 5. Հայ և թուրք ժողովուրդների փոխհարաբերությունները կախված հարցվողների սեռից:**

**Հայ հարցվածները**



**Թուրք հարցվածները**



Պետք է նաև նշենք, որ երկու երկրներում էլ մեծահասակ հարցվածներն ավելի են հակված համաձայնել, որ հայերի և թուրքերի միջև հարաբերությունները լավագույնս նկարագրում է «իբար դուր չեն գալիս» հաստատումը: Մինչդեռ 18-29 տարեկանների 32.2%-ը Հա-


յաստանում, իսկ 28.7%-ը Թուրքիայում կարծում են, որ կանխակալ դիրքորոշումները բնորոշ են երկու կողմերին և դրանք վնասում են հարաբերությունների բարելավմանը:

Անհրաժեշտ է նշել նա մեկ փաստ, որ Հայաստանում պետական աշխատողների (56,3%), տնային տնտեսուհիների (54,7%) և կենսաբաշակատուների (57,7%) մեծ մասը մտածում են, որ թուրքերը չեն սիրում հայերին, իսկ մտավորականների (36,4 %) և մասնագետների մի մասը (40,4%) կարծում են, որ կանխակալ նախախնամությունները խոչընդոտում են հարաբերությունների բարելավմանը:

Ինչ վերաբերում է թուրք հարցվածներին, ապա այստեղ նույնպես թոշակատուների 39,8%-ը, աշխատողների 40%-ը, տնային տնտեսուհիների 37,1%-ը հակված են մտածել, որ թուրքերը չեն սիրում հայերին, իսկ ուսանողների կեսը (48,6%) և աշխատող արհեստավորների 32,3%-ը կարծում են, որ կանխակալ նախախնամությունները խոչընդոտում են հարաբերությունների բարելավմանը (տե՛ս Գծապատկեր 6):


**Գծապատկեր 6. Հայ և թուրք ժողովուրդների միջև փոխհարաբերությունների գնահատականը՝ կախված հարցվածների մասնագիտությունից:**

**Հայ հարցվածներ:**




■ Թուրքերը սովորաբար չեն սիրում հայ ժողովուրդին  
 ■ Երկու կողմերի նախախնամությունը իսկաբարում է հայ և թուրք ժողովուրդների հարաբերությունների բարելավմանը

**Թուրք հարցվածներ:**



Թվում է, թե թուրք հարցվածների մոտ ամենակարևոր հարաբերությունները կապված են կրթական մակարդակի հետ: Այսպես, ցածր կրթական մակարդակ ունեցող հարցվածների 16,7% տոկոսը մտածում է, որ հայերը չեն սիրում թուրքերին, իսկ այս տոկոսը նվազում է բուհերի շրջանավարտների շարքում (9,7%): Մինչդեռ կա նաև մեկ այլ լուրջ տարբերություն, որը վերաբերում է «կանխակալ նախախնամությունները խոչընդոտում են հարաբերությունների բարելավմանը» կարծիքին: Համապարտական կրթությամբ հարցվածների 46,5%-ը կիսում է այդ կարծիքը (տե՛ս Գծապատկեր 7):

**Գծապատկեր 7. Հայ և թուրք ժողովուրդների միջև փոխհարաբերությունների գնահատականը՝ կախված հարցվածների կրթական մակարդակից: Թուրք հարցվածներ:**



Հայ և թուրք հարցվածների կարծիքները համընկնում են նաև Հայաստանի և Թուրքիայի պետությունների միջև հարաբերությունների գնահատման առումով:

Այլուսակ IX. Ձեր կարծիքով, հետևյալ հաստատումներից ո՞րն է լավագույնս նկարագրում թուրքերի տեսակետը հայկական և թուրքական պետությունների ներկայիս հարաբերությունների վերաբերյալ:

	Հայ	Թուրք
Թուրքիան/Հայաստանը համարում է Հայաստանը/Թուրքիան բարեկամական հարևան երկիր	0,4	12,7
Թուրքիան/Հայաստանը սահմանակից երկիր է, որի հետ Հայաստանը/Թուրքիան չունի դիվանագիտական հարաբերություններ	36,0	23,5
Թուրքիան/Հայաստանը պոտենցիալ վտանգ է ներկայացնում Հայաստանի/Թուրքիայի համար	27,6	20,6
Թուրքիան/Հայաստանը հանդիսանում է թշնամական երկիր Հայաստանի/Թուրքիայի համար	33,6	23,4
Պժվարանում են պատասխանել	2,4	19,8

Ինչպես երևում է այլուսակից, հայ և թուրք հարցվածների հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ Թուրքիայի հարցվածների 12,7% կարծում են, որ «Հայաստանը համարում է Թուրքիան որպես բարեկամական հարևան երկիր», բացի այդ Թուրքիայում հարցվածների մեջ շատ մեծ է նրանց տոկոսը (19,8%), ովքեր չունեն հստակ պատկերացում հարցի մասին:

Բայց այդ պեսք է նշել, որ հայ հարցվածների 33,6%-ը գնահատել է Թուրքիան որպես «թշնամական երկիր Հայաստանի համար», ինչն ավելի է, քան թուրք հարցվածների մոտ, որտեղ հարցվածների 23,4%-ն է սովել նման փոխադարձ գնահատական: Այստեղ, իհարկե, անհրաժեշտ է հաշվի առնել երկու կարևոր հանգամանք, որ ազդեցություն են գործել հատկապես հայ հարցվածների գնահատականների վրա. ա)


Հայաստանը և Թուրքիան սահմանակից երկրներ են, որոնք, սակայն, չունեն հաստատված միջպետական դիվանագիտական հարաբերություններ, ք) Թուրքիան այն երկիրն է, որը 20 տարուց ավել փակել է Հայաստանի հետ իր սահմանը՝ շրջափակելով մեր երկիրը: Մա բացահայտ թշնամական բայլ է հարևան երկրի նկատմամբ, հատկապես եթե հաշվի առնենք այն, որ երկու երկրների միջև նորագույն ժամանակաշրջանում երբևէ չի եղել որևիցե պատերազմական գործողություն: Թուրքիան այս պարագայում պարզապես կատարում է եղբայրական Ադրբեջանի պարտադրանքը:

Հայաստանում հարցվածների պատասխանները այս հարցին՝ կախված կրանց սեռից, տարիքից ու զբաղմունքից, շատ նման են նախորդ՝ հայ և թուրք ժողովուրդների միջև հարաբերությունների հարցի պատասխաններին: Այսպիսով, հարցված տղամարդիկ ավելի շատ են հակված չեզոք դիրքորոշումների, իսկ կանայք ավելի քիչ են ցուցաբերում բացասական մտտեցում: Կախված տարիքից՝ հարցվածները ավելի շատ կամ քիչ են հակված մտածել, որ Թուրքիան թշնամական երկիր է Հայաստանի համար: 60 ու բարձր տարիքի հարցվածների 36,4%-ն է այդպես կարծում, մինչդեռ 18-29 տարեկանների միայն 25,1%-ն է այդ կարծիքին: Հետաքրքիրն այն է, որ այս հարցում նա, ինչպես նախորդ հարցում, պետական աշխատողները, թոշակառուները և տնային տնտեսուհիները ավելի են հակված բացասական գնահատականների, իսկ մտավորականները, դասախոսներն ու ուսուցիչները համեմատաբար չեզոք դիրքորոշումներ ունեն (տե՛ս Գծապատկեր 8):

Թուրքիայում հարցվածների պատասխանները նույնպես տարբերվել են ըստ նրանց տարիքի, սեռի ու զբաղմունքի: Այստեղ տղամարդիկ թեպետ ավելի շատ են հակված չեզոք պատասխանների՝ համեմատած կին հարցվածների, սակայն հատկապես երրորդ պատասխանի տարբերակում («Հայաստանը թշնամական երկիր է, Թուրքիայի համար») արական սեռի հարցվածները ավելի են կարեորել այն (25,9%), քան իգական սեռի հարցվածները (20,7%): Ակտենք, որ կա-


նանց հարցվածների մեջ բարձր էր նրանց տոկոսը (25,4%), ովքեր խնդրի մասին նույնիսկ պատկերացում չունեն: Ինչ վերաբերում է տարիքային խմբերին, ապա մեծահասակ հարցվածները ավելի են հակված մտածել, որ «Հայաստանը թշնամական երկիր է Թուրքիայի համար»: 45-59 տարեկան հարցվածների 28%-ը և 60 ու ավելի բարձր տարիքի հարցվածների 41,1%-ը համաձայն են այդ նույն կարծիքի հետ: Սակայն 18-29 տարեկանների միայն 20,9%-ն է կիսում այդ կարծիքը և նրանց 26,6%-ը համեմատաբար չեզոք դիրք է զբաղվում: Թուրքիայում հարցված թոշակառուների 34,7%-ը, պետական ծառայողների 26,9%-ը և տնային տնտեսուհիների 21,5%-ը մտածում են, որ «Հայաստանը թշնամական երկիր է Թուրքիայի համար»: Ինչպես նախորդ դիտարկման դեպքում, ուսանողների մեծ մասը (41,9%) և խանութպանների մեկ քառորդը (27,3%) առանձնացել են համեմատաբար չեզոք դիրքորոշումներով (տե՛ս Գծապատկեր 8):

Գծապատկեր 8. Հայաստանի ու Թուրքիայի պետությունների միջև հարաբերությունների գնահատականները՝ կախված հարցվածների մասնագիտությունից և զբաղմունքից: Հայ հարցվածները:






**Թուրք հարցվածները:**



**Գծապատկեր 9. Հարցվածների կարծիքները Հայաստանի և Թուրքիայի պետությունների միջև՝ կախված նրանց կրթական մակարդակից:**

**Թուրք հարցվածներ:**




Հայաստանը սահմանակից երկիր է, որի հետ Թուրքիան չունի դիվանագիտական հարաբերություններ  
 Հայաստանը Թուրքիայի համար պոտենցիալ վտանգ է ներկայացնում  
 Հայաստանը հանդիսանում է թշնամական երկիր Թուրքիայի համար

Երբ մենք նայում ենք հարցվածների կրթական մակարդակին, ապա թվում է, թե թուրքական դեպքում կա բավականին էական տարբերություն հայ ժողովրդի և պետության հարցապնդման հանդեպ: Օրինակ, համալսարանի շրջանավարտների վերաբերմունքը, ովքեր ակնհայտորեն ավելի դրական են վերաբերվում հայ ժողովրդին, դառնում է ավելի անորոշ, երբ խոսքը գնում է հայոց պետության մասին: Այս խմբի հարցվողների 31.9%-ը, ավելի քան մյուսները, կարծում են, որ «Հայաստանը պոտենցիալ վտանգ է ներկայացնում Թուրքիայի համար», բայց նաև նրանց ավելի քիչ տոկոսը (17.4%), քան մյուսները, կարծում են, որ «Հայաստանը թշնամական երկիր է Թուրքիայի համար» (տե՛ս Գծապատկեր 9):

Ամփոփելով, կարող ենք ասել, որ կա նս մեկ կարևոր հանգամանք: Դատելով թուրք հարցվածների երկու հարցերին տրված պատասխաններից՝ պարզվում է որ, նրանք ավելի շատ են ընտրել առաջին տարբերակը (դրական վերաբերմունք) և ավելի հանդուրժող են եղել իրենց գնահատականներում, քան հայ հարցվածները, հատկապես դա վերաբերում է հայ ժողովրդի նկատմամբ գնահատականներին: Հակասակը, թուրք հարցվածների ավելի պակաս վստահությունը հայոց պետության նկատմամբ երևում է նաև հաջորդ հարցին տրված պատասխաններից (տե՛ս Գծապատկեր 10): Թուրքիայում հարցվածների ճնշող մեծամասնությունը համարում է, որ հեղափոխության դեպքում Հայաստանը կարող է Թուրքիային տարածքային պահանջներ ներկայացնել (տե՛ս Գծապատկեր 10):

Գծապատկեր 10. Ի՞նչ եք կարծում, եթե այսօր հնարավորություն տրվեր, Հայաստանը կենրկայացնի տարածքային պահանջներ Թուրքիային:



Հարցվածների կարծիքները հայ-թուրքական հարաբերությունների անցյալի ու ապագայի մասին բավականին հետաքրքիր են: Հայ հարցվածների մեծամասնությունը կարծում է, որ այդ հարաբերությունները մնացել են անփոփոխ վերջին 10 տարիների ընթացքում և առաջիկա 10 տարիների ընթացքում նույնպես անփոփոխ կմնան: Ի տարբերություն՝ թուրք հարցվողները հակված են մտածել, որ երկու երկրների միջև հարաբերությունները վերջին 10 տարիների ընթացքում վատթարացել են և ապագայում կշարունակեն մնալ անփոփոխ (տե՛ս Աղյուսակ X և XD):

Աղյուսակ X. Հարաբերությունները վերջին 10 տարում

	Հայաստան	Թուրքիա
Բարելավվել են	22,6	14,4
Մնացել են նույնը	52,5	31,3
Վատթարացել են	21,0	35,0
Չգիտեմ	3,8	19,3


Աղյուսակ XI. Հարաբերություններն առաջիկա 10 տարում

	Հայաստան	Թուրքիա
Գրաբեյալվեն	14,7	24,7
Կմնան նույնը	37,4	30,8
Կվատթարանան	25,3	17,6
Չգիտեմ	22,6	26,9

Սակայն, ավելի մանրամասն հայացքով պատասխանների բաշխումը դիտարկելիս, բացահայտվում են հետաքրքիր այլ փաստեր: Պարզվում է, որ հայ հարցվածները որոշակիորեն ավելի գոհ են հայ-թուրքական հարաբերությունների վերջին 10-ը տարվա զարգացումներից, իսկ թուրք հարցվածները ավելի լավատեսական են այդ հարաբերությունների ապագա 10-ը տարիների հանդեպ:

Հարցվածների հաջորդ հարցին տրված պատասխանները օգնում են բացատրել տարբերությունների մասին վերը նշված եզրակացությունները:

Գծապատկեր 11. Արդյոք կարծու՞մ եք, որ Հայաստանի և Թուրքիայի միջև նորմալ հարաբերությունների հաստատմանը խանգարող որևէ կարևոր խոչընդոտ գոյություն ունի:



Ինչպես տեսնում ենք, Հայաստանում հարցվածների ճշգրտ մեծամասնությունը համոզված է, որ գոյություն ունի շատ կարևոր խոչընդոտ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման և բարելավման համար, իսկ թուրք հարցվածները այս առումով դեռ բավա-

կանին կողմնորոշված չեն: Թեպետ, հարկ է նշել, որ թուրք հարցվածների գրեթե 40%-ը կարծում է, որ գոյություն ունի երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորմանը խանգարող շատ կարևոր խոչընդոտ: Այժմ միանգամայն պարզ է, թե ինչու են թուրք հարցվածներն ավելի լավատես հայ-թուրքական հարաբերությունների ապագայի հանդեպ, և ինչու են հայերը կարծում, որ ոչ մի փոփոխություն տեղի չի ունենա: Այն փաստը, որ հայ հարցվածների մի մասի կարծիքով երկու երկրների միջև հարաբերություններն ապագայում կհարելավեն, կարելի է բացատրել այսպես. իրենց կարծիքով որոշակի բարելավում (ամենայն հավանականությամբ խոսքը տնտեսական համագործակցությանն է վերաբերում) արդեն տեղի է ունեցել:

Հայ հարցվածները հայ-թուրքական հարաբերությունների բարելավմանը որպես ամենակարևոր խոչընդոտ մատնանշել են հետևյալ պատասխանները.

ա) Հայկական հարց/ցեղասպանությունը - 81,7%

բ) Հայ-ադրբեջանական հարաբերությունները/ Արցախի հիմնախնդիրը - 9,8%

գ) Կրոնական տարբերությունները - 2,8%

դ) Ազրեյի վանթությունները - 1,4%

ե) Այլ - 4,3%

Շատ թուրք հարցվածների՝ այդ հիմնական խոչընդոտներն են.

ա) Հայկական կողմի ցեղասպանության պնդումը - 19%

բ) Հողը - 12,1%

գ) Կրոնական տարբերությունները - 11,2%

դ) Պատմությունը - 9,4%

ե) Արտաքին ուժերը - 7,8%

զ) Հայաստանի կողմից տարածքների պահանջը Ադրբեջանից - 6%

է) Քաղաքականությունը - 5,1%

ը) Նախապաշարմունքը - 4,5%

թ) Այս պատասխաններ - 24,9%

## §2. Ժողովրդավարության զարգացում

Կարելի է պնդել, որ ժողովրդավարական կամ ոչ ժողովրդավարական կերպարը երկրում կարող է լինել կարևոր գործոն՝ կարծրատիպերը վերացնելու գործում: Այս տեսանկյունից հարցվածներին խնդրել էինք իրենց կարծիքը հայտնել երկու երկրներում ժողովրդավարության զարգացման մակարդակի մասին: Ստորև աղյուսակում բերված պատասխաններից երևում է, որ ընդհանուր առմամբ հայ և թուրք հարցվածները չեն կարծում, որ երկու երկրներում էլ ժողովրդավարության զարգացման մակարդակը բարձր է: Հատկանշական է, որ երկու երկրներում էլ հարցվածների մոտ կեսը՝ 46%-ը, ժողովրդավարության զարգացման մակարդակը (հատկապես իրենց երկրում) գնահատել են որպես միջին: Հատկապես հայ հարցվածները երկու երկրների համար էլ ավելի ցածր են գնահատում ժողովրդավարության զարգացման մակարդակը: Հայ հարցվածների 12,5%-ը կարծում է, որ Թուրքիայում ժողովրդավարության մակարդակը շատ ցածր է: Մինչդեռ թուրք հարցվածների միայն 4,9%-ն է այդպես կարծում, իսկ 22,8%-ը համարում է, որ ժողովրդավարության մակարդակը Թուրքիայում բարձր է: Թուրքիայում կատարված հետազոտության մասնակիցների 30,5%-ը կարելի է ասել ընդհանրապես պատկերացում չունի Հայաստանում ժողովրդավարության զարգացման մակարդակի մասին:

**Աղյուսակ X. Ո՞րքան է ժողովրդավարության զարգացման մակարդակը Հայաստանում և Թուրքիայում:**

	Հայաստան		Թուրքիա	
	Հայաստանում	Թուրքիայում	Թուրքիայում	Հայաստանում
Շատ ցածր	9,7	12,5	4,9	5,0
Ցածր	29,8	27,3	18,9	19,1
Միջին	46,0	36,8	46,1	34,8



Բարձր	10,6	9,2	22,8	9,9
Շատ բարձր	2,1	1,2	3,0	0,7
Չգիտեմ	1,8	13,0	4,3	30,5

Հետազոտությունը ցույց տվեց, որ երկու երկրներում էլ մարդիկ կարծում են, որ հարևան երկրում ժողովրդավարության զարգացման մակարդակը, ընդհանուր առմամբ, ավելի ցածր է, քան իրենց երկրում: Այն տարբերությամբ, որ Հայաստանում հարցվածներն ավելի հավաստարկելոված գնահատականներ են տվել, այն պարզ պատճառով, որ ավելի լավատեղյակ են երկու երկրներում տիրող բարքերի մասին:

Հարցման ընթացքում երկու երկրներում էլ հարցվածներին առաջարկվել էր նկարագրել իրենց զգացմունքները կամ կարծիքները միմյանց մասին՝ օգտագործելով հետևյալ հինգ բալանոց սանդղակը, որտեղ (1)-ը նշանակում է «շատ բացասական», (2)-ը՝ «բացասական», (3)-ը՝ «չեզոք», (4)-ը՝ «դրական» և (5)-ը՝ «շատ դրական»: Ստացված պատասխանների միջինացված հաշվարկային բալլը հետևյալն էր:

**Ադյուսակ XI. Ընդհանուր առմամբ, ինչպիսի՞ կարծիք կամ վերաբերմունք չուր ունեք թուրքերի/հայերի նկատմամբ:**

	Միջին բալ
Հայաստանում	1,96
Թուրքիայում	2,73

Հայ հարցվածների կարծիքը թուրքերի մասին, ընդհանուր առմամբ, բավականին բացասական է - (1,96), իսկ թուրք հարցվածների վերաբերմունքը հայերին ավելի մոտ է չեզոք գնահատականի - (2,73): Ինչը, հաշվի առնելով երկու ժողովրդների միջև պատմական իրողությունները, լիովին հասկանալի է:

Հաջորդ հակադարձ հարցով (նույն հինգ բալանոց սանդղակով) փորձել էինք պարզել հարցվածների կարծիքն այն մասին, թե ինչ են կարծում հարևան երկրում իրենց մասին:

**Ադյուսակ XII. Ձեր կարծիքով, թուրքերը/հայերը, ընդհանուր առմամբ, ինչպիսի՞ կարծիք կամ վերաբերմունք ունեն հայերի/թուրքերի նկատմամբ:**


	Միջին բալ
Հայաստանում	1,73
Թուրքիայում	2,33

Այսպիսով՝ հայ հարցվածները կարծում են, որ թուրքերը, ընդհանուր առմամբ, բացասական կարծիք ունեն հայերի մասին (1,73), իսկ թուրք հարցվածները կարծում են, որ հայերի վերաբերմունքը թուրքերի նկատմամբ մի փոքր ավելի դրական է (2,33):


Հարկ է նշել, որ այս հարցերի պատասխանները տարբերվում էին, կախված հարցվածների մասնագիտությունից ու զբաղմունքից:

Այսպիսով՝ Հայաստանում պետական աշխատողներն ու կենսաթոշակատուները (տարեցները) թուրքերին տվել են ամենացածր գնահատականները, իսկ մասնագետները, ուսուցիչները և մտավորականները տվել են համեմատաբար ավելի լավ գնահատականներ: Մինչդեռ Թուրքիայում աշխատողների, խանութպանների, ուսանողների, թոշակատուների տնային տնտեսուհիների վերաբերմունքը հայերի նկատմամբ և տրված գնահատականները համեմատաբար ավելի բարձր են (*տե՛ս* Գծապատկերներ 12 և 12ա):

Գծապատկեր 12. Հայաստանում հարցվածների գնահատականները թուրքերի նկատմամբ՝ կախված իրենց զբաղմունքից:




Գծապատկեր 12 ա. Թուրքիայում հարցվածների գնահատականները հայերի նկատմամբ՝ կախված իրենց զբաղմունքից:



Ինչպես ցույց տվեց հարցումը, թուրքերի վերաբերմունքն ու հայերին տրված գնահատականները մեծապես կախված էին իրենց կրթական մակարդակից: Թուրքիայում հարցվածների մեջ բուհերի շրջանավարտների կարծիքը հայերի մասին ակնհայտորեն շատ ավելի դրական է (3,03), (տե՛ս Գծապատկեր 13):

Գծապատկեր 13. Թուրքիայում հարցվածների գնահատականները հայերի նկատմամբ՝ կախված իրենց կրթական մակարդակից:



Որպեսզի ավելի հստակ պարզաբանվեն պատկերացումներն ու կարծրատիպերը, որ հայերն ու թուրքերը ունեն միմյանց նկատմամբ, հարցվածներին մենք խնդրել էինք գտնել մի բառ, որն իրենց կարծիքով բնորոշում է հարևան ժողովրդին: Մտադր բերված աղյուսակներում ընդգրկել ենք հարցվածների կողմից առավել հաճախ տրված հատկանիշները: Ինչպես տեսնում ենք, Հայաստանի հարցվածների կողմից թուրք ժողովրդին տրված բնութագրերի երկու երրորդը բացասական են, մինչդեռ թուրք հարցվածների կողմից հայ ժողովրդին տրված բնութագրերի միայն մեկ երրորդն է բացասական (տե՛ս Աղյուսակ XIII և XIV):

Աղյուսակ XIII. Եթե Ձեզ խնդրեին մեկ բառով բնութագրել թուրքերին, ապա ի՞նչ կապատասխանեիք:

Բացասական բնութագրեր	68,7%
-Արյունաբբու	-6,4
-Թշևամի	-10,1
-Բարբարոս	-9,1
-Մարդասպան	-6,4
-Զավթիչ	-2,6

-Վայրենի	-3,6
-Այլ բացասական	-30,5
<b>Դրական բնութագրեր</b>	<b>6,0%</b>
<b>Չեզոք բնութագրեր</b>	<b>9,5%</b>
<b>Զգիտում</b>	<b>15,8%</b>

Աղյուսակ XIV. Եթե Ձեզ խնդրեին մեկ բառով բնութագրել հայերին, ապա ի՞նչ կ'պատասխանեիք:

<b>Բացասական բնութագրեր</b>	<b>34,3%</b>
-Թշնամի	-7,8
-Կանխակալ բացասական	-7,2
-Չար	-7,0
-Եսասեր, կանխակալ	-4,5
-Այլ բացասական բնութագրեր	-7,8
<b>Դրական բնութագրեր</b>	<b>16,5%</b>
-Լավ մարդ	-4,2
-Բարեկամական ազգ	-1,4
-Ջանասեր, աշխատասեր	-1,2
-Մարդկային	-5,7
-Այլ դրական բնութագրեր	-4,0
<b>Չեզոք բնութագրեր</b>	<b>7,9%</b>
-Քրիստոնյա	-2,0
-Հայ	-1,6
-Այլ չեզոք բնութագրեր	-4,3
<b>Զգիտում</b>	<b>41,0%</b>

Հարկ է նշել, որ Հայաստանում 18-29 տարեկան հարցվածները թուրքերին ավելի հաճախ են տվել բացասական հատկանիշներ

(տվյալ տարիքային խմբի հարցվածների 70,9%-ը), իսկ 30-44 տարի-  
քային խմբի հարցվածներն ընտրել են ավելի չեզոք ու դրական հատ-  
կանիշներ (նրանց 18,3%-ը նշել է չեզոք կամ դրական բնութագիր),  
յուս մյուս տարիքային խմբերը:

Կարևոր ենք համարում նշել, որ Թուրքիայում հարցվածների գզ-  
լի մասը (41,0%) դժվարացել է հայ ժողովրդին տալ որևիցե բնութագիր:  
Հատկապես շատ են այս խմբում երիտասարդները: Այսպես, օրինակ  
18-29 տարեկան հասակի հարցվածների 46,6%-ը ընդհանրապես չեն  
արտահայտել իրենց կարծիքը: Մինչդեռ, 60 տարեկանների տարիքա-  
յին խմբում միայն 28,8%-ը չեն կարողացել պատասխան տալ այս  
հարցին: Մեծահասակ հարցվածների նման «տեղեկացվածությունը»  
արտացոլվել է հայերին՝ իրենց կողմից տրված բնութագրերի վրա:  
Նրանցից 41,1%-ը հայերին վերագրել են բացասական բնութագրեր,  
12,3%-ը դրական և 17,8%-ը՝ չեզոք: Պետք է ավելացնել նաև, որ 18-29  
տարեկան հարցվածների 32,5%-ը հայերին վերագրել են բացասական  
հատկանիշներ, ինչը մյուս տարիքային խմբերի համեմատ, ավելի  
ցածր տոկոս է:

Ավելի լիարժեք պատկերացում կազմելու նպատակով այն մասին,  
թե ինչպես են հայերն ու թուրքերը միմյանց ընկալում, տվեցինք  
ևևտկալ հարցերը, որոնցում հարցվածներին առաջարկվում էր հայե-  
րին ու թուրքերին նմանեցնել մի շարք այլ ժողովուրդների հետ: Մաս-  
նավորապես՝ ադրբեջանցիների, բուլղարների, վրացիների, իրանցի-  
ների, իրաքցիների, ռուսների, սիրիացիների, հույների և, իհարկե, հա-  
յերի ու թուրքերի հետ:

Երկու երկրներում էլ մեկ հարց տրվել էր հարցվածներին այլ ժողո-  
վուրդներին թուրքերի նմանության մասին:



Աղյուսակ XV. Չեր կարծիքով որբանով են թուրքերը նման հետևյալ երկրների ժողովուրդներին:

	Բոլորովին նման չեն			Որոշ չափով նման են			Շատ նման են			Չգիտեմ		
	Հայաստան	Թուրքիա	Հայաստան	Թուրքիա	Հայաստան	Թուրքիա	Հայաստան	Թուրքիա	Հայաստան	Թուրքիա	Հայաստան	Թուրքիա
Ասորբեան	2.0	7.7	19.6	49.9	78.0	31.7	0.4	10.7				
Բուլղարիա	36.8	41.7	37.7	36.9	9.3	5.3	16.2	16.2				
Վրաստան	39.4	26.8	44.4	44.8	12.8	8.8	3.4	19.6				
Իրաք	15.1	39.0	43.1	40.1	30.4	4.8	11.4	16.1				
Իրան	16.7	38.6	47.9	40.3	29.5	5.0	5.9	16.2				
Ռուսաստան	92.5	70.2	4.7	11.1	1.2	1.5	1.6	17.2				
Սիրիա	23.9	46.4	47.7	31.8	16.0	3.3	12.4	18.5				
Հունաստան	60.4	52.8	27.9	26.2	2.4	4.0	9.3	17.0				
Հայաստան	68.9	59.8	28.5	25.1	1.7	1.8	0.9	13.3				

Երկրորդ հարցը նույնպես երկու երկրներում տրվել էր հարցվածներին հայերի՝ այլ ժողովուրդներին նմանության մասին:

Աղյուսակ XVI. Չեր կարծիքով որբանով են հայերը նման հետևյալ երկրների ժողովուրդներին:

	Բոլորովին նման չեն			Որոշ չափով նման են			Շատ նման են			Չգիտեմ		
	Հայաստան	Թուրքիա	Հայաստան	Թուրքիա	Հայաստան	Թուրքիա	Հայաստան	Թուրքիա	Հայաստան	Թուրքիա	Հայաստան	Թուրքիա
Ասորբեան	71.8	48.8	25.9	20.2	2.1	2.1	0.2	29.0				
Բուլղարիա	34.5	29.4	49.2	32.0	7.4	3.7	8.9	34.9				
Վրաստան	28.7	32.7	61.1	28.1	9.1	3.4	1.1	35.7				
Իրաք	75.9	54.0	14.7	10.5	1.6	1.8	7.8	33.7				
Իրան	62.2	53.2	32.4	11.5	2.7	1.7	2.7	33.6				
Ռուսաստան	67.9	18.4	29.4	38.1	2.3	11.9	0.4	31.7				
Սիրիա	62.9	40.9	27.5	20.9	1.8	3.8	7.8	34.5				
Հունաստան	23.4	20.8	49.7	34.5	23.1	13.0	3.8	31.6				
Թուրքիա	68.7	59.8	28.7	25.1	1.7	1.8	0.7	13.3				

Առաջին աղյուսակում (Աղյուսակ XV) բերված պատասխանները ցույց են տալիս, որ թուրք և հայ հարցվածների կարծիքները, ընդհանուր առմամբ, գրեթե համընկնում են: Այսպես, ըստ թուրք և հայ հարցվածների՝ թուրքերը բնավ նման չեն հայերին, ռուսներին և հույներին, բայց, միաժամանակ, որոշակիորեն նման են աղբբեջանցիներին, որոշ չափով վրացիներին, իրաքցիներին և իրանցիներին: Մասնավորապես, հայ հարցվածների կարծիքով թուրքերը շատ նման են աղբբեջանցիներին և որոշ չափով նման են իրաքցիներին, իրանցիներին ու սիրիացիներին: Իսկ թուրք հարցվածների կարծիքով թուրքերը որոշ չափով նման են միայն աղբբեջանցիներին:

Երկրորդ աղյուսակից (Աղյուսակ XVI) երևում է, որ, ինչպես Հայաստանում, այնպես էլ Թուրքիայում հարցվածները կարծում են, որ հայերը որոշ չափով նման են վրացիներին, հույներին և բուլղարներին: Թուրք հարցվածները համարում են նաև, որ հայերը որոշակիորեն նման են ռուսներին: Հայաստանում հարցվածների մեծ մասն այդ կարծիքին չէ, նրանք համարում են, որ շատ նմանություն ունեն հույների հետ: Հարցվածները համաձայն են, որ հայերը բնավ նման չեն թուրքերին, աղբբեջանցիներին, իրաքցիներին և իրանցիներին:

Հարցվածների միմյանց նկատմամբ դիրքորոշումների մասին հստակ պատկերացումներ ստանալու նպատակով, մենք առաջարկել էինք նրանց նկարագրել իրենց վերաբերմունքը մի քանի հնարավոր իրավիճակների վերաբերյալ:

Աղյուսակ XVII. Ինչպիսիք են կրնի Ձեր վերաբերմունքը հետևյալի նկատմամբ:

	Բացասական		Չեզոք		Դրական		Չգիտեմ	
	Հայաստան	Թուրքիա	Հայաստան	Թուրքիա	Հայաստան	Թուրքիա	Հայաստան	Թուրքիա
Եթե պարզեք, որ Ձեր քաղաքում հաստատվել է թուրք/հայ բնակիչ	37,1	19,7	52,9	55,9	8,4	20,7	1,6	3,7
Եթե Ձեր շենքում կամ հարևանությամբ թուրք/հայ բնակիչ	44,8	26,4	46,0	50,4	8,1	20,2	1,1	3,0
Եթե Ձեր աշխատավայրում թուրք/հայ աշխատի	43,9	25,8	47,0	49,7	7,8	19,9	1,3	4,5
Եթե հիվանդանոցում թուրք/հայ բժիշկ Ձեզ բուժի	66,9	22,9	22,8	46,4	6,1	27,2	4,2	3,5
Եթե Ձեր որդին ամուսնանա քրթուհու/հայուհու հետ	92,9	63,6	4,6	19,7	1,2	10,3	1,3	6,5
Եթե Ձեր դուստրը ամուսնանա թուրքի/հայի հետ	94,1	68,1	3,6	17,4	1,1	8,6	1,2	5,9

Ինչպես երևում է աղյուսակից, ընդհանուր առմամբ, կարող ենք ասել, որ հայ և թուրք հարցվածները հիմնականում չեզոք վերաբերմունք են ցուցաբերել այն հնարավոր փաստի նկատմամբ, որ իրենց կյանքում կարող են առնչվել մյուս քաղաքացիություն ունեցող մարդկանց հետ: Սակայն, նրանց հետ ավելի սերտ հարաբերությունների մեջ մտնելու հեռանկարը ոչ հայերին, ոչ էլ թուրքերին չի գրավում, հատկապես երբ խոսքը գնում է իրենց երեխաների՝ թուրքի կամ հայի հետ աուուսանալու հեռանկարի մասին: Այստեղ նույնպես կարող ենք նշել, որ թուրք հարցվողները ավելի քիչ նախապաշարմունքներ ունեն հայերի նկատմամբ, քան հայ հարցվածները: Առավել ցայտուն սա երևում է այն դեպքի համար, երբ «բժշկի են համախոս»:


Հայ հարցվածների մեծամասնությունը (66,9%) բացասաբար է արձագանքել նրան, որ հիվանդանոցում թուրք բժշկի մտ գնա բուժվելու: Իսկ թուրք հարցվածների 73,6%-ը ցույց են տվել չեզոք կամ դրական վերաբերմունք, այն դեպքին որ հիվանդանոցում հայ բժիշկը բուժի իրեն:

Երկու կողմերի վերաբերմունքի նման ծայրահեղ տարբերությունները բացատրվում են նախ և առաջ այն պարզ փաստով, որ Թուրքիայում նախկինում եղել են և հիմա էլ կան հայտնի ու լավ հայագրի բժիշկներ ու հայկական հիվանդանոցներ: Թուրքերի համար սովորական բան էր բուժվել հայկական հիվանդանոցում, հայ բժիշկների մոտ: Ի տարբերություն դրա՝ Հայաստանում հարցվածների համար, որտեղ ընդհանրապես թուրքեր չեն բնակվել ու չեն բնակվում, առավել ևս թուրք բժիկներ չկան ու չեն էլ եղել, հասկանալի պատճառներով, նման իրավիճակ նույնիսկ դժվար է պատկերացնել:

Մի քանի հաջորդիվ հարցերով փորձեցինք բացահայտել հարցվածների նման վերաբերմունքի աղբյուրները: Ինչպես պարզվեց, թուրք հարցվածների կեսը (51,2%) ունեն կամ ունեցել են հայ ընկեր, կամ ծանոթ: Հայաստանում հարցվածների միայն 28%-ն է նշել, որ ունեն կամ ունեցել են թուրք ծանոթներ: Այս փաստը բացատրում է այն, թե ինչու թուրք հարցվածներն ավելի դրական են եղել հայերին տրված իրենց գնահատականներում, քան հայ հարցվածները:

Չեղևյալ գծապատկերը ապացուցում է այն փաստը, որ հարցվածների վերաբերմունքը կախված է նրանից, թե արդյոք նրանք անձնական կապեր ունեն կամ ունեցել են թուրքերի հետ, թե ոչ: Այն հայ մարդիկ, ովքեր թուրք ծանոթներ ունեն, ավելի լավ են վերաբերվում թուրքերին, քան նրանք, ովքեր չունեն:

**Գծապատկեր 14. Հայ հարցվածների կարծիքը թուրքերի մասին, կախված նրանից, թե արդյոք նրանք ունեն կամ ունեցել են թուրք ծանոթներ:**




■ Ունեն թուրք ծանոթներ    ■ Չունեն թուրք ծանոթներ

Հայ հարցվածների մոտ թուրքերի մասին ունեցած կարծիքը, ընդհանուր առմամբ բացասական լինելով, այնուամենայնիվ, մասամբ մեղմվել է, եթե նրանք անձնական շտամների փորձ են ունեցել հարևան երկրի հասարակ մարդկանց հետ: Անձնական շփումների ազդեցությունը առավել զգացնել է տվել թուրքերի մասին նրանց ունեցած չեզոք գնահատականների վրա:

Թուրք հարցվածների մոտ այս ազդեցությունն ավելի ցայտուն է երևում:



Գծապատկեր 15. Թուրք հարցվածների կարծիքը հայերի մասին, կախված նրանից, թե արդյոք նրանք ունեն կամ ունեցել են հայազգի ծանոթներ:




Հայաստանում հարցվածների միայն 3,8%-ն է անձամբ այցելել Թուրքիա: Պետք է նշենք, որ արդյուևները վկայում են, որ այն հայերն, ովքեր եղել են Թուրքիայում, ավելի լավ են վերաբերվում թուրքերին, քան նրանք, ովքեր չեն եղել (տե՛ս Գծապատկեր 16):

Հայ հարցվածների 24,5%-ի մտա ընտանիքի անդամները ծովել են Թուրքիայում և հետագայում տեղափոխվել ու բնակություն են հաստատել Հայաստանում: Սա նշանակում է, որ այդ հարցվածների մտա թուրքերի նկատմամբ վերաբերմունքը կարող էր ձևավորվել հիմնականում իրենց հարազատների կարծիքի ազդեցության տակ:

Թուրքիայում հարցվածների միայն 0,4%-ն է եղել Հայաստանում, ինչը նշանակում է, որ անձնական այցելության փորձը չենք բացառությամբ չէր կարող ազդեցություն գործել նրանց վերաբերմունքի ձևավորման վրա: Սակայն չնոռանանք, որ թուրք հարցվածները հայերի հետ անձնական շփման փորձ կարող էին նաև ունենալ հենց Թուրքիայում, որտեղ, ինչպես հաստի է, մինչ օրս գոյություն ունեն մեծաթիվ հայ բնակչություն և ազդեցիկ հայ համայնք:

Գծապատկեր 16. Հայ հարցվածների կարծիքը թուրքերի մասին, կախված նրանից, թե արդյոք նրանք եղել են Թուրքիայում:




Գծապատկերում բերված տվյալները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր երրորդ հայ հարցված, ով այցելել է Թուրքիա, ունի չեզոք կարծիք թուրքերի մասին, և յուրաքանչյուր տասներորդ հարցված ունի դրական կարծիք: Իսկ այն հայ հարցվողները, ովքեր չեն եղել Թուրքիայում, նրանց միայն 19,3%-ն է արտահայտել չեզոք վերաբերմունք և 3,2%-ն արտահայտել է դրական վերաբերմունք թուրքերի նկատմամբ:

### Յ3. Նախապատվություններ ու ակնկալիքներ

Այս բաժնում քննարկվում են երկու երկրներում հարցվածների նախապատվությունները և դիրքորոշումները, որ նրանք ունեն Հայաստանի և Թուրքիայի միջև տնտեսական ու քաղաքական հարաբերությունների որոշ ասպեկտների վերաբերյալ: Հետազոտության մի շարք հարցեր վերաբերում էին երկու երկրների միջև տնտեսական հարաբերություններին: Կարևոր էր նաև պարզել, թե ինչպիսին է բնակչության մտեցումը մեր երկրների տնտեսական հարաբերությունների նկատմամբ: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հայ հարցվածների մեծամասնությունը ցանկանում է գնել թուրքական սպրանքներ, և նույնը՝ թուրք հարցվածների 60,3%-ը ցանկանում է

գնել Հայաստանում արտադրված ապրանքատեսակներ (Գծապատկեր 17):

**Գծապատկեր 17. Դուր կզեն՞ք թուրքական/հայկական արտադրության ապրանքներ:**



Հայաստանում ու Թուրքիայում անցկացված հարցումները ցույց են տվել, որ թուրքական/հայկական արտադրանք գնելու պատրաստակամությունը որոշակի կախվածություն ունի հարցվածների տարիքի ու միայնաց վերաբերյալ ընդհանուր կարծիքի հետ: Այսպիսով, միանգամայն տրամաբանական է, որ այն հարցվածները, ովքեր լավ են վերաբերվում թուրքերին/հայերին, ավելի հավանական է, որ կզենն թուրքական/հայկական արտադրանք: Հայաստանում 100% դրական պատասխան են տվել նրանք, ովքեր ունեն շատ դրական կարծիք, 91.4% դրական պատասխան են տվել նրանք, ովքեր ունեն դրական կարծիք, 88.9% դրական պատասխան են տվել նրանք, ովքեր ունեն չեզոք կարծիք, 72.0% դրական պատասխան են տվել նրանք, ովքեր ունեն բացասական կարծիք, և միայն 62.2% դրական պատասխան են տվել նրանք, ում կարծիքը շատ բացասական է, բայց պատրաստ են գնել թուրքական արտադրանք: Թուրքիայում 85% դրական պատասխան են տվել նրանք, ովքեր ունեն դրական կարծիք, 71.6% դրական պատասխան են տվել նրանք, ովքեր ունեն չեզոք կարծիք, 43.7% դրական պատասխան են տվել նրանք, ովքեր ունեն բացասական կարծիք և միայն 22.2% դրական պատասխան են տվել նրանք, ում կարծիքը շատ բացասական է, բայց պատրաստ են գնել հայկական արտադրանք: Հետազոտության ընթացքում նաև պարզվեց, որ մեծահասակ հարցվածները ավելի քիչ են պատրաստ գնել թուրքական/հայկական

արտադրանքի ապրանքներ, քան կրտսեր սերնդի հարցվածները (տե՛ս Աղյուսակ XVIII):

**Աղյուսակ XVIII. Դուր կզեն՞ք թուրքական/հայկական արտադրության ապրանքներ:**

	Հայաստան		Թուրքիա	
	Այո	Ոչ	Այո	Ոչ
18-29 տարեկան	78,5	21,5	66,8	33,2
30-44 տարեկան	77,7	22,3	63,3	36,7
45-59 տարեկան	73,1	26,9	48,4	51,6
60 և ավելի տարեկան	62,6	37,4	49,3	50,7

Հայ հարցվածների մեծամասնությունը (73,5%) պատրաստակամություն է հայտնել մեկնելու Թուրքիա զբոսաշրջության և արձակուրդ անցկացնելու նպատակով, իսկ նրանց ճնշող մեծամասնությունը (94,8%) ցանկանում է այցելել Թուրքիա իրենց նախնիների հողը տեսնելու նպատակով: Թուրք հարցվածների մեծ մասը (50,4%) նշել են, որ պատրաստ են գնալ Հայաստան բիզնեսի ու առևտրի համար:

**Աղյուսակ XIX. Դուր կզենայի՞ք արդյոք Թուրքիա/Հայաստան հետևյալ նպատակներով:**

	Այո, կզենայի		Ոչ, չէի գնա		Չգիտեմ	
	Հայաստան	Թուրքիա	Հայաստան	Թուրքիա	Հայաստան	Թուրքիա
Տուրիզմ, արձակուրդ	73,5	43,6	25,2	51,8	1,3	4,6
Բիզնես, առևտուր	31,5	50,4	66,2	45,2	2,3	4,4
Աշխատանք	17,4	38,8	79,7	56,6	2,9	4,6
Ուսում, կրթություն	5,0	33,7	93,2	60,9	1,8	5,4

Բուժման	5,7	45,4	90,6	49,4	3,7	5,2
Տեսնելու իմ նախնիների հողը	94,8	0,0	5,2	0,0	0,0	0,0
Այլ (նշեք).....	0,1	0,2	0,0	0,0	0,0	0,0

Ինչպես երևում է աղյուսակից, հայ հարցվածները հաստատ չեն գնա Թուրքիա ուսումնառության, բուժման կամ աշխատելու նպատակով: Մինչդեռ նրանց մեծ մասը (73,5%) համարում է Թուրքիան զբոսաշրջության ու արձակուրդ անցկացնելու համար հարմար երկիր: Իսկ նրանց բացարձակ մեծամասնությունը (94,8%) կգնա Թուրքիա իր նախնիները հողը տեսնելու նպատակով: Թուրքիայում հարցվածները ավելի քիչ են հակված մեկնել Հայաստան, հատկապես կրթության, աշխատանքի կամ զբոսաշրջության նպատակներով: Մակայն նույն աղյուսակի տվյալները հնարավորություն են տալիս մեկնաբանելու նաև մեկ այլ տեսանկյունից, թուրք հարցվածների 45,4%-ը հնարավոր է համարում մեկնել Հայաստան բուժման նպատակով, նրանց 33,7%-ը պատրաստ են գնալ Հայաստան ուսում ու կրթություն ստանալու համար, իսկ 43,6%-ը զբոսաշրջության ու Հայաստանում իրենց արձակուրդը անցկացնելու համար: Նշենք, որ հայ հարցվածները այդ նույն նպատակներով (ուսում, բուժում) Թուրքիա մեկնելու բոլորովին ցանկություն չունեն (համապատասխանաբար 5,0% և 5,7%):

Չնայած նրան, որ հայ հարցվածների մեծ մասը (77,7%) չի խոսում թուրքերեն և նրանց 18,5%-ը գիտի բնդամներ մի քանի բառ, այնուամենայնիվ, հարցվածների մեծ մասը (73,7%) դրական է պատասխանել այն հարցին, թե արդյոք նրանք դիտում են թուրքական կինոնկարներ, հեռուստատիքներ կամ կարդացել են թուրքական ամսագրեր: Սա խոսում է այն փաստի մասին, որ հայ հարցվածները հիմնականում դիտում են թուրքական ֆուտբոլային ու սպորտային ծրագրեր, որոնք բավականին տարածված են Հայաստանում:

Հետազոտությունը ցույց տվեց, որ Հայաստանում հարցվածների ճնշող մեծամասնությունը համաձայն է, որ Հայաստանի և Թուրքիայի

միջև հաստատվեն դիվանագիտական հարաբերություններ: Մինչդեռ թուրք հարցվածները ավելի քիչ են հակված երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելուն: Այստեղ շատ թարձր է նաև չկողմնորոշված հարցվածների տոկոսը:

**Աղյուսակ XX. Արդյոք Դուք կո՞ղմ եք, թե՞ դեմ եք հետևյալ առաջարկներին:**

Հայաստանում հարցվածներ	Կողմ	Դեմ	Չգիտեմ
Բացել սահմանը Հայաստանի և Թուրքիայի միջև	62,7	31,1	6,2
Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատել	87,7	8,1	4,2
Երկու երկրների միջև տնտեսական համագործակցություն զարգացնել՝ առանց սպասելու քաղաքական և սլատմական խնդիրների լուծմանը	60,1	33,1	6,8

Թուրքիայում հարցվածներ	Կողմ	Դեմ	Չգիտեմ
Բացել սահմանը Թուրքիայի և Հայաստանի միջև	50,9	32,2	16,9
Թուրքիայի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատել	64,6	20,6	14,8
Երկու երկրների միջև տնտեսական համագործակցություն զարգացնել՝ առանց սպասելու քաղաքական և սլատմական խնդիրների լուծմանը	54,0	29,0	17,1



Ինչպես տեսնում ենք, երկու կողմի հարցվածներն էլ աջակցում են Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացմանը և մեր երկրների միջև տնտեսական համագործակցության զարգացմանը:

Թե՛ հայ և թե՛ թուրք հարցվածների մեծամասնության կարծիքով Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերություններ պետք է հաստատել, որպեսզի երկու երկրների միջև տնտեսական համագործակցությունը ավելի զարգանա:

**Աղյուսակ XX. Հետևյալներից որո՞նք պետք է ամենից շատ կարևորվեն Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների զարգացման գործընթացում ի օգուտ երկու երկրների:**

	Հայաստան	Թուրքիա
Պետությունների միջև դիվանագիտական հարաբերություններ	74,8	57,8
Կրթական հարաբերություններ / համալսարանների միջև հարաբերություններ	1,4	3,0
Անտրակական հարաբերություններ գործարարների միջև	6,1	13,5
ՀՎ-ների միջև հարաբերություններ	0,2	7,3
Խորհրդարանականների միջև հարաբերություններ	2,1	3,1
Տուրիստական հարաբերություններ երկու երկրների ժողովուրդների միջև	6,0	7,7
Հայկական հարցի արդար լուծում	6,0	-

Ըստ բաշխված պատասխանների՝ հարցվողները երկրորդ նշանակություն են տվել անտրային հարաբերությունների զարգացմանը: Երկու երկրներում էլ հարցվածները կարևորել են նաև զրոսաշրջության զարգացումը: Կարելի է նաև նշել, որ, ի տարբերություն Հայաս-

տանի, թուրք հարցվածները կարծում են, որ հասարակական կազմակերպությունների միջև հարաբերությունների զարգացումը նույնպես կարևոր գործոն է: Պետք է ընդգծել, որ հայ հարցվածների որոշակի տոկոսը պնդում է Հայկական հարցի արդար լուծումը: Երկու երկրների հարցվածները կարծում են, որ խորհրդարանական և ուսումնական հարաբերությունների զարգացումը պակաս կարևորություն ունի հայ-թուրքական հարաբերությունների բարելավման համար:

## ՎԵՐՋԱԲԱՆ

Ամփոփելով նախ և առաջ պետք է նշել, որ այս հետազոտության ավելամեծ նշանակությունը հավանաբար կայանում է նրանում, որ այն հայ-թուրքական պատմական հարաբերությունների մեջ առաջինն էր և առայժմ՝ միակը: Մենք համոզված ենք, որ առաջիկայում՝ մոտավոր կամ հետավոր ապագայում, բազմաթիվ սոցիոլոգիական ուսումնասիրություններ դեռ կկատարվեն, սակայն այս հարցումը կմնա պատմության մեջ: Տարիներ են անցել այս հետազոտության անցկացման ժամանակից, շատ բան է փոխվել հայ-թուրքական հարաբերություններում: 2009թ. կնքվեցին հայ-թուրքական արձանագրություններ, հետո դրանք ստեղծվեցին և նույնիսկ հետ կանչվեցին մեր Ազգային ժողովից: Նաև եղան Հայաստանի և Թուրքիայի նախագահների փոխադարձ այցելություններ ֆուտբոլի միջազգային մրցությունների ժամանակ: Փոխվել են նաև մեր հասարակությունները: Հասկանալի է թուրք հասարակությունը վերջին 6-7 տարիների ընթացքում լուրջ փոփոխություններ կրեց: Ստամբուլում Հրանտ Դինքի սպանությունից հետո կարծես թուրք հասարակությունը արթնացավ և կարելի է ասել առաջին անգամ իր պատմության մեջ թուրք ժողովուրդը իր ձայնը բարձրացրեց իշխանությունների դեմ՝ հայտարարելով իր սեփական քաղաքացիական հայացքների ու դիրքորոշումների մասին, որոնք արմատապես տարբերվում էին պաշտոնական քաղաքականությունից: Այն, ինչի մասին նշում էին մեր հետազոտության ընթացքում թուրք մտավորականների փոքրաթիվ խմբի մասնակիցները, այսօր արդեն Թուրքիայում բարձրա-

ձայնում են հարյուր հազարավոր ցուցարարներ Ստամբուլի հրապարակներում:

Մենք վկա ենք նրան, թե ինչպես է այսօր Թուրքիայում տեղի ունենում հասարակական գիտակցության արմատական արդիականացում կամ ուղեղների հեղափոխություն: Թուրք ժողովուրդի արթնանում է դարավոր ստրկամիտ քնից և առաջ է քաշում իր պահանջներն ու սկսում պայքարել խոտրի և խղճի ազատության համար: Թուրք ժողովրդի այս պայքարում Հրանտ Դինքի սպանությունը վերջնականապես արթնացրեց, սթափեցրեց լայն զանգվածներին: Այսօր Թուրքիայում արդեն շատերն են խոսում հայերի Ցեղասպանության մասին, գրքեր են գրում, հրատարակում: Թուրք գրողը, նույնիսկ, արժանացավ Նոբելյան մրցանակի՝ Հայոց ցեղասպանության մասին գիրք գրելու համար: Իհարկե Թուրքիայի իշխանությունները շարունակում են համատրոն պնդել, որ 1915թ. ոչ մի ցեղասպանություն հայերի հանդեպ տեղի չի ունեցել: Բայց թուրք հասարակությունն արդեն նրանց չի հավատում: Թուրք հասարակությունն այսօր ուրիշ է, նրանցից առանձին խմբեր նամակներ են գրում, համացանցում տեղադրում ու հայ ժողովրդից ներողություն են խնդրում կատարվածի համար: Վերջերս Թուրքիայում իրականացրած սոցիոլոգիական հարցումներից մեկում պարզվել էր, որ ուսանողության 33%-ը տեղյակ է և ճանաչում է Հայոց ցեղասպանությունը<sup>5</sup>: Թուրքիայի երիտասարդ սերունդը դուրս է գալիս այն քաղաքական սահմանափակ «կլիշեներից», պաշտոնական քարոզչությունից, որ տասնամյակներ շարունակ պահում էին թուրք հասարակությանը չինացության մեջ՝ սեփական պատմության նկատմամբ: Վերջերս, ինչպես հայտնում է թուրքական Etha գործակալությունը, Ստամբուլի Բողազլի համալսարանի ուսանողությունը բողոքի ակցիա էր կազմակերպել՝ հայերի ցեղասպանությունը ժխտող պաշտոնական քաղաքականության դեմ<sup>6</sup>: Նրանք պնդում էին, որ 1915 թվականին Թուրքիայում պատահած դեպքերը հայ ժողովրդի նկատմամբ ոչ թե արտաբնական է եղել, այլ ցեղասպանություն: Ուսանողները վանկարկել են «Դեմոսլ շրջվեր դեպի» Դինքը, դեպի Ցեղասպանությունը:

<sup>5</sup> "Голос Арменин", Суббота, 24 января 2015 года, №3 (20637).

<sup>6</sup> <http://news.am/rus/news/255782.html>

2014թ. ապրիլին, ցեղասպանության հիշատակի օրվան նախորդած իր հայտնի ելույթում Երզողանը, ցավակցելով հայ ժողովրդին, առաջարկում էր հարգանքներ անցցալի «ընդհանուր ցավը» և հարյուր տարվա դիմակայության փոխարեն սկսեն լսել ու հասկանալ միմյանց: Նա կոչ էր անում երկու ժողովուրդներին մոռանալ անցյալը և միտվել դեպի սպագան<sup>7</sup>: "Hurriyet Daily News"-ի փոխանցմամբ՝ Դավութբոլուն The Turkish Policy Quarterly ամսագրում հրապարակված հոդվածում նշել է, որ Երզողանի հայտարարությունը պետք է հիմք հանդիսանա հետագա քայլերի համար: Հաս նրա՝ Երզողանի ցավակցությունները չպետք է դիտարկվել որպես կոնյուկտուրային քայլ, այլ պետք է ընկալվել որպես նախնադաս, մարդկանց ուղեղում և հիշողություններում անցյալը փոխելու, բոլոր կողմերին կայուն խաղաղության վրա հիմնված ընդհանուր ապագա կերտելու կոչ:

Նա համարում է, որ Երևանի և Անկարայի միջև նոր, առավել ամուր խաղաղություն կհաստատվի այն դեպքում, եթե քաղաքական գործիչները և մտավորականության ներկայացուցիչները իրենց ավանդը ներմուծեն երկու կողմերի մարդկանց մեջ հոգեբանական պատենշները հարթահարելու հարցում:

«Որպեսզի թուրքերն ու հայերը կարողանան գիտակցել իրենց հետ տեղի ունեցածը, անհրաժեշտ է փոխադարձ հարգանք միմյանց հիշողության նկատմամբ: Հայերի համար 1915 թ. եղել է տեղահանման տարի, որի ընթացքում նրանց հետ մեծ ողբերգություն է կատարվել: Անատոլիայի թուրքերի համար թե՛ 1915թ.-ից առաջ և թե՛ հետո եղել են սպրեյեր և անկախության համար մղվող պայքարի տարիներ: Իրականում դրանք «ընդհանուր ցավի» տարիներ էին,- ամփոփել է Դավութբոլուն<sup>8</sup>:

Այսպիսով՝ ժամանակակից Թուրքիայի իշխանությունները 1915թ. մեկուկես միլիոն հայերի բնաջնջումը շարունակում են որակել որպես նրանց տեղահանման պատճառով առաջացած «ընդհանուր ցավ»: Փաստորեն, հերքելով հայերի ցեղասպանությունը և շրջափակման մեջ

<sup>7</sup> <http://www.theguardian.com/commentisfree/2014/may/02/turks-armenians-erdogan-condolences-1915-armenian-massacre>

<sup>8</sup> <http://www.ilur.am/news/view/31648.html>



պահելով Հայաստանի Հանրապետությունը, նրանք այսօր էլ շարունակում են հարյուրամյա ցեղասպանության քաղաքականությունը:

Մեր հետազոտության հիմնական արդյունքները ներկայացված են տեքստում: Մենք հատուկ ձեռնպահ ենք մնացել լայնածավալ ամփոփումներից ու հեռուն գնացող եզրակացություններից: Մեր խնդիրն էր առավել ամբողջական կերպով ներկայացնել մեր հետազոտության ընթացքում հարցազրույցներին մասնակցած մարդկանց կարծիքները: Ինչ վերաբերում է անցկացված երկու սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների համեմատական վերլուծությունից բխող եզրակացություններին և մեկնաբանություններին, ապա դրանցից շատերը մենք թողնում ենք ընթերցողի դատին:

### ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Հարցման համեմատական արդյունքներից պարզ երևում է, որ թուրք հասարակությունը շատ ավելի վառ է տեղեկացված Հայաստանի ու հայերի մասին, քան հայ հասարակությունը Թուրքիայի և թուրքերի մասին: Ստացվում է, որ Թուրքիայի հարևան երկիրը՝ Հայաստանը, իրենց համար գրեթե անհայտ մի երկիր է: Թուրքիայում ստացված հարցման պատասխանների վերլուծությունը վկայում է այն մասին, որ թուրք հասարակությունը տեղեկացված չէ ու Հայաստանի մասին գիտելիքների շատ ցածր մակարդակ ունի:

Օրինակ, հետազոտությունը պարզեց, որ թուրք հարցվածների մեջ քիչ չեն մարդիկ, ովքեր կարծում են, որ հայերի կրոնական պատկանելությունը հուրդիզան է, և Հայաստանում շարունակում է իշխել կոմունիստական կուսակցությունը: Հիշեցնենք, որ այս հարցումը կառարվել է 2003 թվականին, այսինքն՝ Մովկետակյան Միության փլուզումից տասը տարի անց: Այլ կերպ ասած՝ ժամանակակից Թուրքիայի քաղաքացիները լավատեղյակ չեն այն մասին, թե իրենց սահմանակից հարևան երկրում՝ Հայաստանի Հանրապետությունում, ինչպիսի քաղաքական կարգեր են հաստատվել կոմունիստական ռեժիմի փլուզումից հետո: Ավելին, թուրք հարցվածների մի մասը նույնիսկ հստակ պատկերացում չունի հարևան երկրի աշխարհագրական մեծության մասին:

կրանք իրենց պատասխաններում նշել են, որ Հայաստանը գտնվում է Սև ծովի, Կասպից ու Միջերկրական ծովերի ափին, իսկ բնակչությունը մոտավորապես հասնում է ութ միլիոնի:

Հետաքրքիր է պարզել, արդյոք թուրք հասարակությունն իր բոլոր սահմանակից երկրների մասին ունի նման ոչ ճիշտ պատկերացումներ, թե դրանք թերի են միայն Հայաստանի պարագայում: Թուրք հասարակությունը սեփական պատմական դեպքերի մասին՝ հատկապես Առաջին աշխարհամարտի ու 1915թ. հայերի կոտորածների, նրանց ցեղասպանության մասին ունի շատ մոտավոր, թերի և հաճախ խեղաթյուրված տեղեկություններ: Թուրքիայի իշխանությունները, փաստորեն, անտեղյակության մեջ են պահում սեփական ժողովրդին: Երկար տարիներ դա նրանց հաջողվում էր: Այսօր, սակայն, իրավիճակը փոխվում է, և թուրք հասարակությունն ավելի իրագրել է դառնում սեփական պատմության ու հարևան ժողովուրդների մասին: Լուսության դավադրությունը կարծես թե վերջնականապես ձեռքվել է: Մասնավորապես, Ստամբուլում բնակվող թուրք քաղաքացիներն այսօր տեղեկանալու շատ ավելի լայն հնարավորություններ ունեն:

Ինչ վերաբերում է հայ հարցվածներին, ապա նրանց բոլոր պատասխաններից լավ երևում է, որ նրանք ունեն շատ հստակ ու ճշգրիտ պատկերացումներ թե՛ Թուրքիայի Հանրապետության և թե՛ թուրք ժողովրդի մասին: Իհարկե, հայերի ճշգրիտ գիտելիքները, այնուամենայնիվ, կրում են որոշակի բացասական երանգավորում, բայց դա արդեն գալիս է պատմական փորձից ու ցեղասպանության հետևանքներից:

### ԴՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Հետազոտության արդյունքները խոսում են այն մասին, որ հայ և թուրք հասարակություններում տարիների ընթացքում ամրագրվել են որոշակի դիֆերոշումներ միմյանց նկատմամբ: Երկու ժողովուրդների միջև վերաբերմունքն ունի նմանություններ և առանձնահատկություններ ևս: Թուրքերի դիֆերոշումները հայերի նկատմամբ տարբերվում են ավելի դրական կամ չեզոք վերաբերմունքով: Բարձր կրթական մակարդակ ունեցող հտավածների վերաբերմունքը հայերի



նկատմամբ եույնիսկ ավելի դրական է: Դրան ավելացնենք, որ թուրքերը հաստատում են, որ հայերն ունեն ոչ բացասական վերաբերմունք իրենց նկատմամբ: Մինչդեռ հայ հարցվածները չեն կասկածում, որ թուրքերը հայերի նկատմամբ ունեն միանշանակ բացասական դիրքորոշումներ: Արդյունքում ստացվում է, որ թուրքերը չգիտեն հայերի բացասական վերաբերմունքի աստիճանը, իսկ հայերը չգիտեն թուրքերի դրական վերաբերմունքի աստիճանը: Այսպիսով՝ հայերի և թուրքերի դիրքորոշումների միջև գոյություն ունի որոշակի անհամապատասխանություն, նրանք լավ չեն պատկերացնում այդ՝ «իբրա չհասկանալու» խորությունը:

Շնդհանուր առմամբ, հայ հարցվածների՝ թուրքերին տրված գնահատականները կարելի է համարել «բացասական»: Իսկ թուրք հարցվածների հայերին տրված գնահատականները եույնքան բացասական չեն ու ավելի մոտ են «չեզոքին»: Հայերի կողմից թուրքերին տրված բնութագրերի 2/3 բացասական են, իսկ թուրքերի կողմից հայերին տրված բնութագրերի միայն 1/3 են բացասական:

Հարցումը ցույց տվեց այն, որ բարձրագույն կրթությամբ թուրք հարցվածները հստակ տարբերակում են իրենց դիրքորոշման մեջ հայկական պետությունը հայ հասարակությունից, ինչպես նաև բացասական վերաբերմունքը պետության նկատմամբ նրանք չեն փոխանցում հայ հասարակության վրա:

Դիրքորոշումների վրա մեծ ազդեցություն է գործում անձնական ծանոթության ու անձնական կապերի առկայությունը: Այն հայ հարցվածները, ովքեր ունեն կամ ունեցել են ծանոթներ, ընկերներ Թուրքիայում, ցուցաբերել են ավելի չեզոք դիրքորոշումներ: Իսկ այն թուրք հարցվածները, ովքեր ունեն կամ ունեցել են ծանոթներ, ընկերներ Հայաստանում ցուցաբերել են ավելի դրական դիրքորոշումներ:

### ՆԱՍՏԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երկու երկրների հասարակություններում էլ կան ընդհանուր հոգեբանական տիրույթներ, որտեղ կարելի է տեսնել փոխհարաբերությունների ապագա զարգացումների հնարավոր ուղղությունները: Գոյություն ունեն փոխադարձ հետաքրքրության և հաղորդակցման միտում-

ներ, եույնիսկ, էթե դրանք բխում են տարբեր նախապատվություններից ու դրդապատճառներից: Օրինակ, թուրք հարցվածների համար «բուժվելի հայ թժշկի մոտ» նախադասությունը, որը վկայում է վստահության մակարդակի մասին, առանձնապես ոչ մի կասկածներ չի հարուցում: Մյուս կողմից եույն հաջողությամբ հայ հարցվածները պատրաստ են գնել թուրքական ապրանքներ, պատրաստ են մեկնել հանգստանալու, իրենց արձակուրդն անցկացնելու Թուրքիայի հանգստյան ծովափնյա վայրերում: Հայերը նաև կողմ են արտահայտվել Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու օգտին:

Անկասկած, երկու երկրների միջև ամենակնճռուտ հարցը դա 1915թ. հայերի կոտորածի գնահատումն է, Ցեղասպանության ճանաչումը և կորուստների հատուցումը: Հատկանշական է, որ հայ հարցվածների 82% և թուրք հարցվածների 19% այս խնդիրը շատ լավ գիտակցում են: Էթե ժամանակակից Թուրքիայի իշխանությունները համարձակություն գտնեն դատապարտել անցած դարակազմի կատարված ոճրագործությունը, դա, իհարկե, կլինի առաջին քայլը երկու երկրների ու ժողովուրդների միջև հարաբերությունների հաստատման ու հետագա զարգացման համար: Այս առումով թուրք հասարակությունը եույնիսկ ավելի լայնախոհ է ու առաջադիմական, քան քաղաքական իշխանությունները: Ուշ թե շուտ Թուրքիան պետք է ճանաչի 1915թ. Հայոց Ցեղասպանությունը և որքան շուտ դա անի, այնքան ավելի շուտ կկարգավորվեն այդ երկրի հարաբերությունները հարևան Հայաստանի և բազմաթիվ հեղինակավոր ու աշխարհամիջուտ հայության հետ:

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը այս առումով, շատ հարմար առիթ էր թուրքական իշխանությունների համար՝ ճանաչել իրենց պատմական անցյալը: Սակայն, ինչպես երևում է նրանց հայտարարություններից ու վարկերակերպից, այդ երկրի իշխանությունները ոչ բարոյապես, ոչ հոգեպես պատրաստ չեն ու չեն հասունացել նման համարձակ ու ազնիվ քայլի համար:

Շատ դժվար է իրականացնել մի հետազոտություն, որի նախապատրաստական փուլը տևում է համարյա 2 տարի: Առաջին դժվարությունները ի հայտ եկան հետազոտողների առջև դաշտային հարցման ընթացքում: Շատ մարդիկ Թուրքիայում հրաժարվում էին հարցազրույցին մասնակցելուց՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հետազոտությունը վերաբերվում է Հայաստանին և հայերին: Հետազոտողների առջև նրանք փակում էին դռները՝ ասելով «Մենք չենք հետաքրքրված նման հարցերով»: Ավելին, կային նաև մարդիկ, ովքեր մեծ կապածներ ունեին այն առումով, թե ովքեր են անցկացնում այս հետազոտությունը, ինչ նպատակով է և այլն: Նրանք շարունակ հետաքրքրվում էին, թե ով է հանձնարարել, որ նման հետազոտություն կատարվի, արդյոք հայերն են ղեկավարում այս հետազոտական ծրագիրը, «Դուք հա՞յ եք», «Արդյո՞ք դուք աշխատում եք հայերի համար» և այլն:

Որոշակի խնդիրներ եղան նաև Հայաստանում: Քանի որ հետազոտության մասին հանրությունը տեղյակ էր, նախնական (pretest) ուսումնասիրության ժամանակ տեղական թերթերից մեկում տպագրվեց մի հոդված, որում պնդում էին, թե իբր հետազոտությունը գլխավորում են Թուրքիայի մասնագետները և, հետևաբար, մեր հետազոտողները «դավաճան» են: Բացի այս կարգի դժվարություններից, որ պատահել էին հարցման ժամանակ, թուրք փորձառու հարցազրուցավարներն ունեցել են նաև լուրջ խնդիրներ, հարցազրուցավարներից մի քանիսը վերցվել են կալանքի, նրանց հարցաքննելուց հետո տեղի իշխանությունները թույլատրել են հետազոտությունն անցկացնել միայն որոշ քաղաքներում ու շրջաններում: Մի քանի այլ շրջաններից հարցազրուցավարներին պարզապես արտաքսել են: Դրա հետևանքով Թուրքիայի սոցիոլոգները ստիպված են եղել փոփոխել հետազոտության ընտրանքը:

Իհարկե, այսպիսի հետազոտությունն ինքնին «զգայուն» է հետազոտման առարկայի հանդեպ, և նման «զգայունությունը» բացահայտում է նաև այն փաստը, որ Թուրքիայի քաղաքացիները և Հայաստա-

նի քաղաքացիները փոխադարձաբար իրենց ազգային ինքնությունը քայքայելու պոտենցիալ վտանգ ունեն:

Չնայած բոլոր դժվարություններին, դաշտային հետազոտության կարևոր արդյունքներից մեկը այն փաստն էր, որ երկու երկրների միջև հարաբերությունները կարող են զարգանալ միայն այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են առևտուրը, բիզնեսը, կրթությունն և գրոսաշրջությունը: Մրանք են այն նախնական փոխադարձ շփման տիրույթները, որոնցում հայ-թուրքական հարաբերությունները կարող են ստանալ քիչ թե շատ նորմալ զարգացում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1:

Աղյուսակ 1.

Շրջան	Քաղաք	Ընտրանքի չափը
Metropoles	Istanbul	290
	Ankara	102
	Izmir	70
Mediterranean	Adana	41
	Antalya	41
	Içel	39
	Maraş	20
Eastern Anatolia	Erzurum	25
	Malatya	23
	Elazığ	19
	Bitlis	9
Aegean (except Izmir)	Izmir	40
	Manisa	19
	Aydın	20
	Denizli	20
South-east Anatolia	Gaziantep	18
	Adıyaman	17
	Urfa	20
	Diyarbakır	20
Central Anatolia (except Ankara)	Konya	39
	Yozgat	19
	Karaman	20
	Eskişehir	19
	Kayseri	19
Black Sea	Samsun	20

	Trabzon	21
	Kastamonu	19
	Zonguldak	18
	Tokat	20
	Bolu	10
Marmara (except Istanbul)	Bursa	60
	Kocaeli	20
	Sakarya	20
	Bilecek	21
	Tekirdağ	21
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>1 219</b>

Աղյուսակ 2.

Մարզ	Քաղաք	Ընտրանքի չափը
Երևան	1. Երևան	329
Եփրակ	2. Գյումրի	75
	3. Արթիկ	25
Լոռի	4. Վանաձոր	96
Արմավիր	5. Էջմիածին	25
	6. Մեծամոր	50
Կոտայք	7. Հրազդան	25
